

12842-12843

with
891-99

D-23

Դ Ժ Ո Խ Ք

(Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն)

Բ-ՐԴ ՀԱՏՈՐ, ՄԱՍՆ Բ-ՐԴ

Յովսէփ Ճանիկեան

Հասկողութեամբ Միլտոնի



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Վարդանեանցի

Типографія М. ВАРТАНЯНЦА, Вельям. ул. д. № 7.

1900

1002
5906

2924

Գ Ս Ո Փ Բ

(ՄԱՍՄՅՈՂԱԳ)

ԳԴ-Ղ ԴՍՄՄ ԴՈՂԴ ԳԴ-Ղ

Дозволено Цензурою. С.-Петербургъ 26 Февр. 1900 г.

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1900
0065



Ս Գ Լ Բ Ի Գ

Титулярный М. Барташманъ, Восточн. яз. № 7.
1900

«ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ»-Ի ԵՎ ԶԱՌԱՅԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԴԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՄԱՍԻՆ ԿԱՐԴԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ
ԿԱՐԴԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Ներկայ գրքուկիս մէջ «Ծերուկ»-ի և
«Հարսնուկի պատմութիւնները այլոցմէ
լսած եմ». դժոխքի պատմութեան սկիզբ-
ները ըստ մասին Մելտոմի «Դրախտ
կորուսեալ»-էն և ս. գրքերէ քաղուած,
իսկ մնացեալները երեակայութեան ար-
դիւնք են:

Թէ ի՞նչ էին երկրորդ հատորի Ա. և
Գ. մասերուն սլարոնակութիւնը.—եթէ
հանգամանքները ներեն, գրքուկիս վերջը
իբրև ծանօթութիւն պիտի գրեմ.

Յանկալի էր ինձ որ ներկայս արևե-
լեան հայոց, այստեղի բարբառով, գրէի,
բայց խորհնլով թէ առ այդ կատարելա-
պէս չը պիտի կարողանայի յաջողիլ, իմ
վարժուած արևմտեան հայոց բարբառով
գրեցի:

Չայս ևս ըսեմ, թէ Ա. «Դժոխք»-էն

յետոյ շատերը կ'ըսէին ինձ թէ «Ի՞նչու
«Դրախտ»-ը չես գրեր և զժոխքը կը
գրես». բայց ի՞նչպէս գրեմ դրախտը,
քանի որ, զժբաղդաբար, անոր զուռներէն
միայն կարողացած էի գայն դիտել և
հիանալ:

Ամեն անոնք որոնք որ տեսած են
դրախտը, չեն կարող գրել, վասն զի չեն
կարող վերադառնալ յաշխարհ, իսկ ա-
նոնք որ դեռ ի մարմնի են և չեն տե-
սած, անոնք ևս չեն կրնար գրել, հետե-
ւաբար, ո՛չ ոք կարող է նկարագրել երկ-
նային դրախտը: Իսկ երկրային դրախտը
կամ դրախտները անոնք թող գրեն, ո-
րոնք տեսած են և կը վայելեն:

1.

ԴԺՈՒՍԼՅԻՆ ԻՇԽԱՆՆԵՐԸ

Գնահ, զնահ տես մեր իշխանները և զժոխա-
յին զասակարգութիւնները, կ'ըսէր Սաղայէլ, և
այս այցելութեամբդ պիտի իմանաս սանդարա-
մետականաց մեծութիւնն ու զօրութիւնը:

Ուղեկից նշանակուած էր պալատան հազա-
րապետն ու պոչաւորներուն զօրապետ Հէզար-
ֆէնտը, որ արդէն ծանօթ էր մեզ: Նոքա առաջ-
նորդեցին ինձ նախապէս Բէեղզբեռուղին, Սաղա-
յէլին երկրորդին, հոյակապ ապարանքը, իշխա-
նին՝ անունը, ինչպէս և ինքն ևս, այլ ևս երկիւղ
չէր ազդէր ինձ: Սովորական ձեւակերպութիւն-
ները կատարել է յետոյ ներկայացայ իշխանին:
Բէեղզբեռուղը այս անգամ ևս բաւական ծանօ-
թութիւններ տուաւ պատժարաններուն և յան-
ցանքներու տեսակներուն ու աստիճաններուն
վրայ:

Զուտ մեկնեցանք իշխանին ապարանքէն:
Հարցան ուղեկիցքս թէ Բելիարին կամիմ ներ-

կայանալ նախ, թէ Մողոքին: Ես չը գիտեմ ձեր կարգն ու կանոնները, ըսի, սակայն աւելի կը փափաքէի հռչակուած իշխանին, Բելիարին ներկայանալ: Եւ մեր շոգեկառքը սկսաւ արշաւասոյր ընթանալ: Իշխանաց երկրին մէջ էինք. ինչ հոյակապ շինուած եր, ինչ չքեղ տեսարաններ կը յաջորդէին միմեանց: Վեջապէս հասանք Բելիարին ապարանքը, և վեր ելնելով ներկայացանք իշխանին: Սկսաւ նա սիրալիր կերպով հարց ու փորձ ընել՝ մեր նպատակին և մեր տեսածներուն վրայ, գովեց իմ հետաքրքրութիւն և խոստացաւ որ երբ վերադառնամ յաշխարհ, զանազան բարիքներով պիտի վարձատրէ: Նա այնչափ քաղցր կը խօսէր, որ կ'ըսէի ինքնիրենս. ափսոս չէ, որ այսպիսի քաղցրաբարոյ իշխան մը այս տեղեր ընկել է, բայց իսկոյն միտքս ընկաւ նորա համար դուռածները *) և փոխեցի իմ նպատաւոր

*) Յարեաւ ապա յայնմ կաշմանէ Բելիար յաւէտ իմն չնորհազեղ և բարեհամբոյր ի ցոյցս, թուէր իմն կարգեալ յատրճան պատուոյ և յերեւելի դործս, բայց բովանդակն էր ստութիւն, և պատիր խաբէութիւն: Սակայն բերան նորա բղխէր մանանայ... ճարտար էր ի մոլութեան անդ, բայց վատ և յոյլ յազնուական արարս:

(«Իրախտ կորուսեալ» 65—66)

Նաև «Բելիար, քան զոր վարչագոյն հոգի և զակա-

կարծիքը: Միևնոյն յարգանքով մեզ ճամբու դրաւ, և մենք կառք նստելով զնացինք Մողոք իշխանին ապարանքը: Ներկայացանք, և նա՝ սակաւ ինչ հարցութորձէ յետոյ, սկսաւ պատմել հին դարերու մէջ իր վայելած մեծ փառքը, հազարաւոր անմեղ մանկունքը, զորս կը զոհէին իրեն: Նա գոռոզ, ամբարտաւան և բարձրելոյն զէմ անհաշտ հակառակորդ, չէր ուզեր ինձ յայտնել երկնից մէջ իր ունեցած բարձր դիրքը, իրենց պարտութիւնը ու երկնային լուսէն զըրկուիլը: Մեկնեցանք նորա ապարանքէն ևս:

Մեծ հետաքրքրութիւն ունէի հարստութեանց իշխանը, Մամոնայի տեսնել: Ուղեկիցքս պատուիրեցին կառապանին և ուղղուեցանք այն կողմ: Անցանք բազում երկիրներէ և բազմաթիւ ապարաններէ և հասանք Մամոնին *) ապարանքին մօտերը: Դիտեցի շուրջս, զօրանոցներու պէս քարուկիր, մեծամեծ շէնքեր կային, որոնց դուռ-

տեալ զկնի մալութեանց ոչ անկաւ երբէք յերկնից, և այլն.
(«Իրախտ կորուս.» գիրք բ. 46)

*) Մամոն յաւէտ երկրաքարչ քան զամենայն հոգիս որք անկան յերկնից: Քանզի և յերկինս անդ աչք նորա և միտք միշտ խոնարհեալ կային, ոչուցեալ յաւէտ ընդ հարստութիւն ոսկեկուռ յատակի երկնից, քան զմայլեալ ընդ Աստուածային ինչ և սուրբ յերանական տեսութեանն:

(«Իրախտ կորուս.» թ. 51):

ներուն վրայ փորագրուած էին «Արծաթ՝ թիւ 1», միւսին վրայ «արծաթ՝ թիւ 2», և այս թիւեր հարիւրաւորներու կը հասնէին: Երբ ինքնիւրենս կը զարմանայի այդ արծաթի մեծ հարստութեան վրայ, ընկերներս յիշեցուցին թէ՛ պահապանութեան վրայ, ընկերներս յիշեցուցին թէ՛ պահապանութեան վրայ, ընկերներս յիշեցուցին թէ՛ պահապանութեան վրայ: Ոչին կողմ նայեցայ, որ ասոնք ևս քովէ քով շարուած են և, «արծաթ»-ին պէս, գուռներուն վրայ գրուած էին «ոսկի թ. 1, թ. 100. թ. 500» և այլն: Կը խորհէի թէ աշխարհիս բոլոր ոսկիները եթէ հաւաքուին և ի մի ձուլուին, չին կարող այդ անհաշիւ գանձարաններուն միայն մի բանին լիցունել: «Ի՞նչ կը զարմանաս, ըսաւ հաղարապետը. ասոնցմէ յետոյ դեռ նոր պիտի գան յակինթներու, զմրուխտներու, ադամանդներու, թանկագին գոհարներու և զանազան հագուստներու նիւթերու ամրակառոյց գանձարանները, որոնք իշխանին ապարանքին մօտերը շարուած են:

Հասանք ապարանքը, երբ սահողութներէն վեր կը բարձրանայինք, կ'ըսէի մտքովս, թէ այսչափ հարստութեան տէր իշխանի մը բնակարանն արդեօք որչափ չքեղ, որչափ գոհարներով զարդարուած է: Բայց երբ վեր ելանք, տեսայ որ սխալուած եմ եղել. իշխանին բնակարանն ու կահ կարասիքը միւս իշխաններուն ապարանքներէն ու կահ կարասիներէն վար էր, վեր չէր:

Իշխանին ներկայացուցին զիս: Նա, երեսը դեղնած, աչքերը փոսը ընկած, նիհար ու տղեղ, բոլորովին անհամակրելի մարդ մը էր: Նողկանքս աւելի սաստկացաւ, երբ նա մի քանի խօսքերէ յետոյ ըսաւ, «Ո՛վ այցելու, ոսկի կամ արծաթ որչափ ընծայ բերիր վերին աշխարհէն»: Զփութեցայ և զայրոյթէս չը գիտէի թէ ինչ պատասխանէի այն զեղծ մարդուն, որ, անբաւ հարստութեան տէր ըլլալով հանդերձ, հետաքրքիր այցելու է մը քանի մը ոսկի ընծայ ստանալու ակնկալութիւնն ունէր: Թէպէտ իմացած էի, թէ նա սարսափելի ազահ մարդ մը է, բայց այս աստիճան ընչասէր չէի կարծեր: «Տէր իշխան, ըսի, Ձեր սովորութիւններուն անտեղեակ էի, և բան մը չեմ բերած, խնդրեմ, ներեցէք»: «Զէ. պատասխանեց նա, չէ կարելի Մամոնին ներկայանալ առանց որ և իցէ ընծայի. բայց որովհետեւ դուն տուա՛յն անգամն է որ կ'այցելես ինձ, կը ներեմ քեզ, պայմանաւ որ աշխարհային մարգոյ խօսիս զայս»:

Իշխանը յետոյ սկսաւ հարցնել թէ ինչպէս է այժմ «Ժերուկը»: Ձեմ ճանաչեր ըսի: Ինչո՞ւ, չը գիտէս այն ծերուկը որ իմ առջև մոմ վառեց և ծիծաղելի վարձատրութիւն մը ունեցաւ: Խնդրեմ, եթէ կարելի է, պատմեցէք, ըսի: «Ուրեմն խօսիմ», ըսաւ և սկսաւ պատմել:

«Ժամանակաւ, հարստութիւնը կորուսած մի վաճառական եկեղեցի կը յաճախէր և իր գործերուն յաջողութեանն համար Յիսուսի կամ սուրբի մը առջև մոմ կը վառէր: Երկար ժամանակ կը շարունակէր այդ սովորութիւնը, բայց իր վիճակ բարեփոխութիւն մը երբէք կրած չէր:

«Հին ատենները, մարդիկ կրօնական պատկերներու մի անկիւնը երբեմն սատանայի պատկեր ալ կը նկարեն եղեր: Ծերուկը դայս տեսնելով մտքովը կ'ըսէ. «Այսչափ ժամանակ այս ինչ սուրբին առջև մոմ վառեցի, խնդրեցի, աղաչեցի, օգուտ մը չի տեսայ, անդամ մնալ սատանային առջև մոմ վառիմ, տեսնեմ ինչպէս կ'ըլլայ: Մոմը կը վառէ, սովորական խնդիրքը կ'ընէ և տուն կ'երթայ:

«Անհատական սատանան այս անսովոր դործը տեսածին պէս լուր տուած է նոյն կողմի պիտին, և նա իսկոյն մեզ հազորդեց և հրահանգ խնդրեց: Մեր մեծ իշխանը այս դէպքին համար ժողովի հրաւիրեց մեզ, և սկսանք խորհրդակցել: Ես կ'ըսէի թէ որովհետեւ այդ բարի ծերուկը սուրբերէն յուսահատելով մեզ գիմած է, պէտք է վարձատրենք, որպէս զի թէ ինքն իր նորածին հաւատքին մէջ հաստատուի ու քաջալերուի, և թէ այլոց ալ բարի օրինակ ըլլայ: Միւս իշխանները սակայն այնպէս չէին խորհէր, անոնք

կ'ըսէին թէ նա ոչ թէ հաւատքով, այլ փորձի համար մեզ գիմած է. երկրորդ, գիտնալ պէտք է թէ ինչ է իր նպատակը: Վաճառականը, իր վիճակը լաւացունելով, կ'ուզէ որ իր մնացած օրերը կերուխումով, զուարճութիւններով անցունէ, թէ ինքն պարզ ապրուստ մ'ունենալու և աղքատներուն ևս օգնելու նպատակաւ է: Թեր ու դէմ կարծիքներէն ու ջերմ վիճաբանութիւններէն յետոյ, մեծ իշխանը հրամայեց ծերուկին անձնական սատանայէն տեղեկութիւն պահանջել: Հեռագիր տրուեցաւ, և քանի մը վայրկեան յետոյ պատասխան առնուեցաւ թէ՝ «Նորա նպատակը՝ իր հարստութեան համեմատութեամբ՝ թէ ինքն համեստ կեանք մը վարել, և թէ բարեգործական հաստատութիւններ հիմնել կամ անոնց օգնել է»: Սաղապէլը, որ կը նախագահէր ժողովին, վիճաբանութիւնները բաւական համարելով, յայտնեց իր կարծիքը թէ՝ «25 կարելի այսպէս անուղղակի կերպով հիւանդանոցներու, ուսումնարաններու, արհեստանոցներու և այլ այսպիսի բարեկատու հաստատութիւններու կառուցման նպաստել»: Միւս իշխանները, ես ևս համոզուեցանք և միաձայն հաւանութեամբ վճռուեցաւ պատրել այդ մարդը, և ըստ այնմ հեռագիր տրուեցաւ:

«Նոյն գիշերը ծերուկը երազին մէջ կը տես-

նէ սատանան, որ մօտենալով իրեն կըսէ. «Ո՞վ բարի ծերունի, բիւրաւոր մարդիկ սուրբերուն առջև մոմ կը վառեն և անկէջ բարիք կը խնդրեն. որուն խնդրուածքը կը կատարուի, որուն՝ ոչ. դու միայն ես, որ զիս ճանչցար ու յարգեցիր, ուրեմն հետեւէ, ինծի և ես պիտի վարձատրեմ քեզ» ըսելով, կը տանի զայն ընդարձակ գանձատուն մի, ուր լիքն էին ոսկի. գոհար և այլ թանկագին նիւթեր. «Ահա, կ'ըսէր սատանան, առ, որչափ որ կ'ամիս»: Մարդը ազահօրէն կըսկսի ծոցերն ու գրպանները լեցունել. յետոյ քղաքները վեր կ'առնու, և գողաւորելով ու ձախ ձեռքովը վեր բռնելով, աջ ձեռքովը կը լեցունէ. այնպէս որ ալ պարսպ տեղ չի մնար»,

«Ծերուկը թանկագին մետաղներով ծանրաբեռնուած, կը դիմէ դէպ ի դուռը. Գանձարանին պահապանը, որ դրան առջև նստած է եղեր, «Ադոնք ո՞ւր կը տանիս, չէ կարելի», ըսելով կը արգիլէ: Ծերուկը երեսը դէպ ի ներս դարձունելով կը կանչէ սատանային. — «Պահապանը թոյլ չի տար. հասիր

— Մտիկ մ'ըներ անոր խօսքերուն:

— Բայց չի թողուր:

Քանի որ քղանցներդ (փեշ.) վեր ժողված ես, ապականէ վրան և անցիր գնա:

«Այդպէս կ'ընէ խեղճը և այդ պահուն կը

զարթնու: Հանդերձներն ու անկողինը ապականուած էին. զարչահոտութիւնը տարածուած էր սենեկին մէջ: Կինը կը զարթեցնէ, որ կը հարցունէ թէ «Ի՞նչ եղաւ քեզի, մարդ. ծերուկը կը պատմէ ամեն ինչ, որուն կը պատասխանէ կինն թէ՛ «Բոլոր աշխարհ Յիսուսին առջև մոմ կը վառեն, դուն ալ սատանային մոմ վառեցիր, պէտք է քեզի. սատանային առջև մոմ վառողին վիճակը (հալը) այդ է»:

Այս պատմութենէն յետոյ Մամմոնին սենեկէն և ասլարանքէն ես մեկնեցանք:

Հարցան ուղեկիցքս թէ կ'ամիմ միւս իշխաններուն ևս այցելել. ոչ, ըսի, այս մի քանի այցելութեամբ հասկացայ զԺոխային իշխանները, զնանք, զնանք:

2.

ՍԱՏԱՆԱՅԵԱԼՆ ԴԱՍԵԿԱՐԳԵՐԸ

Մենք պիտի դնայինք կեղրոնական պաշտօնատունը և անկէջ երթայինք զԺոխային գունդերուն բնակավայրերը: Ուղեկիցքս ի նկատի

ունենալով տեղւոյն հեռաւորութիւնը, օդապարիկ մը բերել տուին, և անով մեկնեցանք դէպի կեղրոնը:

Անցանք հազարաւոր մզոններով և նոյն օրն իսկ հասանք զԺոխոց կեղրոնավայրը: Կառավարիչը կը հսկէր հեռագրատան, տանջանարաններուն, աշխարհէն եկողներուն և այլ զԺոխային հաստատութեանց վրայ: Հասկացուցանք մեր նպատակը և պատրաստուեցանք փութով մեկնիլ, վերադարձին թողլով նոյն հաստատութիւնները այցելել:

Նոյն պահուն աշխարհէն եկող շողեկառքին սուլումը լսուեցաւ, փութացի կայարանը. ամեն երկրէ և ամեն կրօնէ մարդիկ կային. դիմադծերէն ենթադրելով հարցայ մի քանիին թէ՛ ձեր անդիի եղբայրներուն մէջ մեղաւորներ չի կան — ինչո՞ւ չէ, պատասխանեց մէկը, բայց անոնք ըսած են թէ՛ «ի՞նչ հարկ կայ տանջուելու համար մինչև զԺոխք՝ գնալ, քանի որ մենք մեր բաժինը այստեղ կը կրենք»:

«Փութացինք մեր օդանաւը և հազարաւոր մզոններ ևս երթալէ յետոյ, հասանք «պոչաւոր»*)

*) Ադր համար է արդեօք, որ ժողովուրդը պոչով սուտ կ'ըսէ, երբ խօսուած սուտը չափազանց կամ վարպետօրէն հնարուած է, կամ սուտ մը որ չի ծածկուիր:

սատանաներու աշխարհը: Ինչպէս յիշած ենք, այս պոչաւորուն զօրապետը մեր ուղեկից Հէզարֆէնտն էր, զոր տեսածնուն պէս ուրախացան:

Այս սատանաները ետենին մեյմէկ կանգուն պոչեր ունէին, որոնք ոլորուած էին դէպի կրնակնին:

Ի պատիւ մեզ, մեր առջև մի քանի խաբէական փորձեր կատարեցին, որոց մէջ շատ յաջողակ էին:

Հէզարֆէնտը յայտնեց, թէ այս անգորդաշտին մէջ տեսնուած հարիւրաւոր շէքերը, ուր լիքն են «պոչաւոր»ներով, իր գունդերուն մի փոքր մասն կը կազմեն, իսկ մեծագոյն մասը, որ պահեստի են, դէպի աջակողմն ու ձախակողմը գտնուած իրենց տեղերուն մէջ կը բնակին:

Շնորհակալութիւն յայտնելով, դուրս ելանք ատկէց ևս. և մեր օդապարիկ նստելով բարձրացանք, հեռացանք պոչաւորներու աշխարհէն:

Մեր օդաչու նաւը երկար ժամանակ երթալէ յետոյ, կանգ առաւ «Եղջերաւոր» սատանաներու կեղրոնական բնակարանին վրայ: Վար իջանք նաւէն և ուղղուեցանք դէպի անոնց պաշտօնավայրը:

Եղջերաւորները ի մասին ճարպիկութեան թէ և պոչաւորներուն չափ յաջողակ չէին, բայց

սորա ալ ջարդելու, կոտորելու: քանդելու, հըր-
դենելու և այլ այսպիսի աւերումներ զործելու
մէջ սատանաներուն ամենէն ճարպիկն ու կա-
տալիներն էին: Անոնց գլխաւորը «Դահիճ», կո-
չուած զօրապետն էր:

Քանի կը մօտենայինք անոնց բնակարանին,
ներսէն ահուելի, խառնաշփոթ ձայներ, աղաղակ-
ներ կը լսէինք: Ներս մտանք ընդարձակ գաւիթ
մը. նորա մէկ սրահին մէջ խումբ մը եղջերա-
ւորներ պար բոլորած՝ ցատկելով ու ցատկուտե-
լով՝ հրճուանօք հեռակալը կ'երգէին

1.

Մեզի պէտք չեն բնաւ ո՛չ լոյս, ո՛չ երկինք,
և ո՛չ օրհներգ իբրեւ անմեղ հրեշտակք:
Լաւ է դժոխքն, լաւ է խաւարն ուր երգենք,
Ցատկենք, պարենք, և անթիւ լուտանք,
յիշոց տանք:

Կեցցէ՛ յաւէրժ Սաղայէլը, մեր արքայն,
կեցցեն յաւէտանդնդայինք մեր համայն:

2.

Հեռու մեզմէ ազնուութիւն, գթութիւն.
Հեռու, հեռու, լինել անկեղծ և արդար:
Մեզի պէտք են զնդակ, հրացան, վառօղ, թոյն,
Ամենուրեք սփռենք. ջարդենք անդադար:

Կեցցէ՛ յաւէրժ, և այլն:

3.

Թող տանջուին մարդիկ, կրնն շարունակ
Վիշտ, տառապանք, ժանտախտ, սով, սուր,
կոտորած:
Թշուառութիւն, արկածք, ալէտք, և՛ աւերակ
Թող չը պակսին մինչև ցօրն կատարած:

Կեցցէ՛ յաւէրժ և այլն:

Երբ լսեցի այս դժոխային երգը, հարցայ
դահիճ զօրավարին թէ այս ինչ սարսափելի

խօսքեր էին, որ լսեցի: «Հապա ինչ կ'ուզէիր, պատասխանեց նա. միթէ ասոնցէ տարբեր խօսքեր կ'ակնկալէիր. չէ. այս երգածնին ոչ միայն մեր սիրած երգն է, այլ և Սաղայէլէն սկսեալ մեծ և փոքր բոլոր սանդարամետականաց անփոփոխելի դաւանութիւնն է»: Մենք կը մոլորեցնենք մարդիկը, և անոնց մէջ նախանձ, խէթ և ատելութիւն կը սերմանենք, հարստահարութիւններ և պատերազմներ յառաջ կը բերենք. երբեմն բնութիւնն ալ կ'օգնէ մեզ. սովեր, մահ-տարածամենք կը պատահին: Մենք ասոնք կըրնենք, ոչ թէ ձեզի համար, այլ բարձրելոյն դէմ ունեցած մեր հակառակութեան և վրէժխնդրութեան զգացմանց յագուրդ տալու համար»:

Մեկնելու ժամանակը հասած ըլլալով, ատկէց ալ մեր «Մնաք բարեաւն» ըսանք: Մեր օղանաւով ուղղուեցանք դէպի այլ կողմ, «Դե»-ւերուն աշխարհը, ուր հասանք մէկ-երկու ժամէն:

Դեբըրը նախընթաց սատանաներուն պէս չէին. ահագին հսկաներ էին, մենք ինչ էինք անոնց քով — թզուկներ: Տեսնելով այդ ահարկու խոժոռ դէմքերը, չէր կարելի աներկիւղ մնալ, բայց ուղեկիցքս զիս ապահովեցին թէ բնաւ վախնալու բան չի կայ. զի բոլոր գծոխայնոց պէտք եղած հրամանը զրկուած է արդէն:

Եթէ դեբրու հասակները անհեթեթ էին, անոնց բնակարաններն ալ նոյն համեմատութեամբ չինուած էին, 15—20 մեթր բարձրութիւն և նոյն չափով լայնութիւն և երկայնութիւն ունէին: Սանդուխները, տախտակամածները, միջնորմերը, բոլորը երկաթեայ էին. զի անոնց ոյժին և ծանրութեան ներքև ամենէն թանձր տախտակներն իսկ չէին կարող դիմանալ:

Դեբրուն «Դայլ» զօրապետը իմ մասին ուղեկիցներուս խօսած խօսքերէն սկսաւ տակաւ մեղմանալ, մինչև իսկ երբեմն կը ժպտէր: Նա առաջնորդեց մեզ դէպի զօրանոցին ներսերը: Առաջին շէնքը ուր ներս մտանք, ընդարձակ ամրոցի մը կը նմանէր: Դեբըր աստ և անդ խումբ խումբ կանգնած՝ դիւական կատակներ կ'ընէին. խաղեր կը խաղային: Հրամանատարը չուզելով անոնց զրօսանքը խանդարել, դուրս ելաւ սրահներէն և երկաթեայ աթոռներ բերել տուաւ դուրսի գաւիթը, ուր նստանք:

Զօրապետին հրամանին վրայ խումբ մը դեբր դուրս ելան զօրանոցէն և բակը շարուեցան: Իերին նաև մի քանի տեսակ անասուններ, կապարեայ մեծ-մեծ դնդակներ, հաստ երկաթեայ ձողեր, սնտուկներ և այլ այսպիսի նիւթեր, որոնցմով ճարպիկութեան, ոյժի և այսահարկու փորձեր պիտի կատարէին:



Դեռ անոնց չը սկսած՝ դեերուն մէկը ելաւ կանգնեցաւ բակին մէջ տեղը. երկրորդ մը ելաւ անոր գլխուն վրայ ուղղաձիգ պառկեցաւ և սըրունքներն ու թևերը տարածելով, սկսաւ ջրադացի քարի պէս դառնալ: Նախ մեղմ էր դառնալը, բայց հետզհետէ անշափ արագացոյց, որ այլ ևս ոտքերն ու թևերը չէին երևար. կարծես թէ արագաշարժ ճախարակ մը էր որ կը դառնար:

Երբ դադարեցաւ դառնալէ և վար իջաւ գլխուն վերայէն, զօրապետը իմ կարծիքն հարցուց: «Լաւ էր, ըսի. սակայն կարելի է որ մեր աճալարներն ալ կարողանան այդպէս ընել»:

Յետոյ, մի քանի գինուոր, իւրաքանչիւրը ձեռքերնին 100 քիլոկրամնոց 4 ակն գնդակներ անո՞ւմ սկսան մինչ 100 մեթր բարձր դէպի օդը վեր նետել. երբ գնդակին մէկը վար, ավին մէջ իջնէր, իսկոյն գայն վեր կը նետէր, միւս գնդակը կ'իջներ, գայն ալ վեր կը նետէր. այնպէս որ միշտ երկու գնդակները օդին մէջ էին: Դարձեալ իմ կարծիքն հարցուց «ի՞րաւ, ըսի, լաւ փորձ մը ըրին, բայց անհնար չէ, որ աշխարհի մէջ ալ այդ ընելու կարող ուժեղ մարդիկ գտնուին»:

Այս պատասխանին վրայ բակին մէջ տեղը երկաթեայ սիւն մը հաստատեցին, որ շուրջանակի օղակներ ունէր: Մի քանի դեեր, բազկի հաս-

տուժեամբ երկաթեայ ձողերը անցունելով այդ օղակներէն, սկսան ծռել, կըրցնել և շղթաներ հիւսել: Չարմացայ այդ անսովոր ոյժին վրայ:

Դո՛հ եղաւ զօրապետը և հրամայեց այդ ընդարձակ բակին մէջ շրջանակ մը կազմել: Մատարուեցաւ հրամանը: Նա «անասուններ ներս բերէք» ըսաւ. և ահա մի եզն, մի ձի, մի մաքի, մի խոզ, մի էշ և մի շուն այդ շրջանակին մէջ թող տուին: Զօրապետին հրամանաւ, մի խումբ դեեր այդ կենդանիներուն փորերը մտան, որոնք այսահարեցան և սկսան քայլել և զանազան շարժումներ ընել: Սակաւ մի յետոյ սաստկացաւ տենդը. եզը, կը բառաչէր, ձին՝ կը խխնջար, շունը կը հաչէր ու կոռնար, միւսներն ալ իրենց ձայները կը խառնէին անոնց հետ: Ծիծաղաշարժ էր տեսարանը: Մէկ-երկու ըոպէ ալ այսպէս անցնելէն յետոյ կատաղութիւննին սաստկացաւ, եզը սկսաւ իր եղջիւրներովը հալածել միւսները, որոնք իրենք գիրենք կը պաշտպանէին խածնելով կամ կից արձակելով: Վերջապէս, գիրար հալածելէն ու կռուելէն ուժասպառ, փրփուրը բերանին հետզհետէ ընկան տարածուեցան գետնին վրայ: Ծիծաղը դադրեցունելով խնդրեցի պետէն որ բաւական համարի այդ կենդանիներուն տանջանքը: «Ըրդէն ժամանակն եկած է» ըսաւ նա. հրամայեց և դեերը դուրս ելան: Խեղճերը քիչ

քիչ շունչ առին, աչքերնին բացին, ելան կանգնեցան և տարուեցան իրենց տեղերը:

Եյ, ի՞նչ կ'սես, հարցուց գիւղացեւոր: Իրաւ որ ըսի, ծիծաղաշարժ էր: «Ահա այսպէս են մարդիկ, ըսաւ նա. ձին կը հեծնան, անով փայտ կը կրեն, եզնով կը հերկեն, կը սերմանեն, և յետոյ ալ մորթելով միսը կ'ուտեն, նոյնպէս միւս կենդանիները իրենց շահուն կը ծառայեցունին, բայց երբ ադոնք կը տանջուին, մարդիկ հանդիսատես միայն կ'լլան, կը զբօսնուն և կը ծիծաղին: Իրաւ, դուն սակաւ մի ծիծաղիլէ յետոյ գթութիւն ունեցար, խնդրեցիր որ դադարեցունեմ ադոնց տանջանքը, բայց աշխարհի վրայ կան և մարդիկ որ ոչ թէ անբան կենդանեաց, այլ և իրենց հղբայրներուն կամ նմաններուն տանջանքները տեսնելով իսկ. անտարբեր կը գտնուին»: Զէի կարող հերքել նորա խօսքերը, ուստի և լռեցի:

Զօրապետը, տեսնելով իր խօսքերուն տպաւորութիւնը, շարունակեց. «Ասոնք կըխօսիմ անոր համար թէ՛ երբ մարդիկ տեսնեն. որ մենք կը այսահարեմք, ու կը տանջենք զօմանս. չի մեղադրէք մեզ»: Ուղեկիցներուս մէկ ականարկին վրայ գիւղացեւոր յալելոց, «Ինչ և իցէ, թողունք այս նկատողութիւնները և ուրիշ զուարճալի խաղ մը ներկայացունեմ ձեզ»:

Զօրապետին հրամանաւ խումբ մը դէներ եկան շարուեցան բակին մէջ: «Մ'երևաք աչքիս». ըսաւ. և տեսայ որ այդ խումբը աներևոյթ եղաւ, ուր դնացին և ինչպէս եղաւ. — չը գիտեմ: Վայրկեան մը յետոյ, «Եկէք» ըսաւ, և տեսայ որ նոյն խումբը երևան ելաւ: Աներևոյթ ըլլալու խաղմը առաջին անգամ ուղեւորութեանս ժամանակ տեսած ըլլալով, չի զարմացայ:

Մեր կարողութիւններուն մի տեսակն ալ ներկայացունեմ, ըսաւ զօրապետը, և վերջացունեմ:

Տուփ մը և խումբ մը դէներ բերէք ըսաւ և իսկոյն բերին: «Առ, նայէ տուփը» ըսաւ. տախտակեայ փոքր տուփ մը էր. ձեռքովս չորս կողմերը քննեցի, զննեցի և դետինը դրի: Հրամայեց դէներուն որ կարգաւ այդ տուփին մէջ մտնելով աներևոյթ կ'ըլլային: Երբ ամբողջ խումբը վերջացաւ, դարձեալ «Առ, նայէ» ըսաւ: Ի՞նչ տեսնեմ, — զարմանալի բան, տուփին յատակը կորեակով լեցուած էր: Կը կամիս, ըսաւ, որ նորէն կենդանանան», այո, այո, ըսի: «Ուրեմն, ընկերներ, դուրս ելէք» ըսաւ: Մէկ մ' ալ տեսայ, որ կորեակ դէները մէկիկ մէկիկ դուրս ելան և իրենց նախկին տեղերը շարուեցան: Առի նայեցայ տուփը, մէջը բան մը մնացած չէր: Հասկացայ որ այս ալ կերպարանափոխութեան փորձն

էր, որ ամեն կարգի սատանաներն ևս ունին:

Հէգար-Ֆէնտը յիշեցոյց թէ՛ արդեօք ժամանակ չէ՞ մեկնելու: Ելայ կանգնեցայ և շնորհակալութիւն յայտնելով դիւապետին, դուրս ելանք զօրանոցէն:

Մեր օղանաւը սրարշաւ յառաջ կ'ընթանար: 2ը զիտէի թէ ի՞նչ կողմ կ'երթայինք, զի խաւարին թագաւորութեան մէջ ո՛չ արեւ կար, ո՛չ լուսին, ո՛չ արեւելք կար և ո՛չ արեւմուտք: Մթուժեան մէջ հազարաւոր մղոն հեռաւորութիւններ և «կազ» սատանաներուն երկիրն ևս անցնելէ յետոյ, հասանք վերջապէս Աղեկնաքներու (յաւերժահարսներու) *) աշխարհը: Ասոնք կանացի

(Ծանօթ.) *) «Դրախտ կորուստ» երես 327, լերանց, գետոց, ևս չաստուածուհի յաւերժահարսները, և ըստ առձեռն բառարանի «Քանզ մեզ աղեկները (Աղեկնաք) նոյն են, զի Հ. Ղ. Ալիշան ալ «Հին հաւատք հայոց» (տպ. 1895) գրքին երես 206-ին մէջ կը գրէ. «Քիչ քիչ յաւերժահարսներ ալ խաբեբայից և չարաց հետ դասաւորին» և այլն: Ուստի և մեր ներկայ գրուածոյս մէջ «յաւերժահարս» և «աղեկնաք» իբրեւ միեւնոյն գրեցի: (Ըստ Մ. Աբիկեան տձկ. հայ բառարանի, «Հուրի»-ն արաբ. սեւաչուի, յաւերժահարս, իսկ «Փերի»-ն. պարսկ. գեղեցկապատկեր ոք: Խօսքի մէջ փերին է աղեկնաքը:

դէմքով հարսներ, աղջիկներ էին: Մեր անցած ճանապարհին վրայ ամենուրեք լիքն էին յաւերժահարսներով, որոնք կերուխումով, պարելով, երգելով կը զուարճանային:

Յառաջ անցանք դէպի կեղրոնավայրը ուր էր աղեկնաքներու իշխանուհոյն «Աստղիկ»-ին հոյակապ պալատը: Վար իջանք օղանաւէն և դիմեցանք դէպի ապարանքը, որ ծաղկանոցներու մէջ շինուած՝ չքեղ, հիանալի շէնք մ' էր: Ապարանքին պատերը ոչ թէ սատանայից միւս դասակարգերուն բնակարաններուն պէս քարէ ու աղիւսէ շինուած էին, այլ ոսկով և արծաթով: Իսկ սենեակները, մանաւանդ դիցուհոյն բնակած սենեակները բոլորն ալ ոսկեզօծեալ՝ թանկագին գոհարներով զարդարուած էին:

Սանդուխին գլուխը մեզ դիմաւորեց դիցուհին և առաջնորդեց դէպի իւր սենեակը, որոյ ոսկեզօծեալ ձեղունին ու պատերուն վրայ սիրահարական զանազան պատկերներ նկարուած էին: Սեղանին վրայ հազուադիւս ծաղկանց փունջեր շարուած, երկու անկիւնները, ոսկեղէն խոնկամաններու մէջ կնդրուկն ու հալուէն իրենց անուշահոտ ծուխերը կ'արձակէին:

Քաղաքավարական ձեւակերպութիւնները կատարել է յետոյ, Հէգար-Ֆէնտը փութաց յայտնել

իշխանուհւոյն՝ մեր ուղեորութեան նպատակն ու Մեծ իշխանին հրամանները:

Սակաւ ինչ հանդստանալէ և այլ և այլ ըմպելիներով զովանալէ յիտոյ, ցանկութիւն յայտնեցի զօրապետին որ մի քանի ժամ հանդստանալու համար դիցուհին թոյլտուութիւն չնորհէ: Հրամայեց իշխանուհին և սենեակ մը ցոյց տուին ինձ, նոյնպէս զարդարուն և մաքուր: Անդ մի քանի ժամ խոր քնոյ մէջ ընկղմեցայ, զի, այնչափ հեռւոր ճանքորդութենէ և սրտայոյզ տեսարաններէ յետոյ, կարի յոգնած, դադրած էի:

Երբ արթնցայ, տեսայ որ ուղեկիցքս սենեկիս մի անկիւնը նստած կը հսկէին և ցած ձայնով կը խօսակցէին: Ես յոգնութիւնս բաւական առած, կազդուրուած էի: Իմացուցին զիցուհւոյն, որ զարձեալ ընդունեց մեզ իր ներկայութեան: Գեղեցկութեան, սիրոյ և տարփանաց վրայ ևս բաւական խօսելէ յետոյ, իմ փափաքիս համեմատ, ապարանքին մօտ գտնուած աղեկնաքներուն բնակարանները այցելեցինք:

Եթէ սոյն ուղեորութեան մէջ պոչաւորներուն, եղջերաւորներուն, դէերուն և այլ սատանաներուն տգեղ և այլանդակ դէմքերուն կը հանդիպէինք, այժմ, աղեկնաքներու աշխարհին մէջ, հիանալի գեղեցկութեան տէր հարսներ, աղջիկներ կը տեսնէինք. Աստղիկէն սկսեալ բոլոր յա-

ւերժահարսունք զարդարուած, ոսկեճամուկ հանդերձներ էին հագած: Արդարեւ, կ'ըսէի մտքովս, ասոնք մեր լսած յաւերժահարսունքն են, որոնք կարող են իրենց գեղեցկութեամբ հրապուրել, մոլորեցնել ամենէն համեստ և ժուժկալ երիտասարդներն ևս: Երբ անձնական սատանան տարիներու ընթացքին մէջ չի կրնար խաբել իրեն յատկացեալ մարդը, որուն սիրտը կը բնակի, իբրեւ վերջին փորձ օգնութեան կը կանչէ յաւերժահարսանցմէ մէկը, որ յաճախ կը յաջողի:

Հասանք աղեկնաքներուն բնակարաններուն առջև, իւրաքանչիւրը իրենց յատուկ խցիկներն ունէին ճաշակաւ կահաւորուած ու զարդարուած:

Բացի մասնաւորաց սենեակներէն, կային նաեւ տասնէն աւելի ընդարձակ սրահներ, ուր որոշեալ օրերու և ժամերու մէջ հարսունք հաւաքուելով, կը խօսէին, կը ծիծաղէին, կ'երգէին, կը պարէին ու կը զուարճանային:

Այդ պահուն անոնց սովորական զբօսանաց ժամանակն էր. Աստղիկը սրահներուն դռնէն ցոյց կուտար մեզի ներսի հարսները, որոնց մի խումբը մեղեդիներ կ'ըսէին և մի խումբ կ'երգէին ու կը պարէին, բայց ոչ թէ եղջերաւորներուն պէս անչնորք կերպով ցատկոտելով, այլ մեղմիւ և չնորհալի շարժումներով:

Շրջագայութեան ժամանակ սրահին միոյն

մէջ յոյժ գեղանի հարս մի տեսայ: որ աթոռի մը վրայ ընկողմանած էր մտախոհ: Աստղիկը տեսնելով որ այդ գեղունին իմ ուշադրութիւնը գրաւեց, կեցիք, ըսաւ ուղեկցացս, ձեզի զուարճալի դէպք մը պատմել տամ», Կանչեց այդ աղջիկը, որուն «Հարսնուկ» կ'ըսեն եղեր, և հինգս միասին գնացինք քովի պարտէզը: Թիկնաթոռներուն վրայ երեք ուղեւորներս շարուեցանք: Իշխանունին մեզմէ քիչ հեռու գտնուած թիկնաթոռին վրայ նստելով, իր քով առաւ Հարսնուկը և գզուելով, շոյելով խնդրեց որ «վարդապետին պատմութիւնը» խօսի: Գեղեցիկ յաւերժահարսը ժպտելով սակաւ ինչ առարկելէ ու դիմադրելէ յետոյ, սկսաւ պատմել:

«Երկար տարիներ առաջ, ըսաւ Հարսնուկը, աշխարհի վրայ յաւերժահարսներու յատուկ պաշտօնը կը կատարէի. իմ պաշտօնավարութիւնն յոյժ արդիւնաբեր եղաւ, զի չը կար երիտասարդ մը որ իմ հրապոյրներուս դիմադրէր ցվերջ:

«Մինչդեռ սոյն յաջողութիւններուս վրայ հպարտացած էի, լսեցի որ մօտակայ վանքի մը մէջ վարդապետ մը կայ, որուն մինչև այն ատեն չեն կարողացած մօտենալ: Ինձի դիմեցին, խընդրեցին և ես սկսայ թակարդը լարել: Իմացայ որ վանահայրը երբեմն քաղաք կ'ուղարկէր այդ վանականը ինչ ինչ պիտուքներ գնելու: Գնացի

ճանապարհին վրայ աղբիւրի մը մօտ մի քանի օրեր սպասեցի: Վերջապէս օր մի տեսայ, որ ջորի մը հեծած՝ անդին կուգար: Սկսայ վրաս գլուխս շտկել: Երբ աղբիւրին առջեւն պիտի անցնէր, ձեռքս գտնուած գաւաթովը ջուր առնելով հրամցուցի. «չոգ է. ան, խմէ որ զովանաս» ըսելով: Ես կը կարծէի թէ նա զիս և իմ սև աչքերը տեսածին պէս շնորհակալութեամբ պիտի ընդունի ջուրը. բայց այնպէս. չեղաւ խիստ դէմքով մը «2եմ ուզեր» ըսաւ. մտրակեց ջորին և դնաց: Իմ արժանապատուութիւնը վիրաւորուած համարելով, սիրտս նեղացաւ, բայց նոյն պահուն ինչ կրնայի ընել: Խորհեցայ ուրիշ հրեարքով մը այդ բիրդ մարդը կարգի բերել: Ուրիշ օր մը հանդերձներս ու գլխարկս փոխած՝ դարձեալ գնացի նոյն ճանրուն վրայ սպասեցի: Քանի մը օր յետոյ ջորին հեծած՝ եկաւ: Երբ մօտեցաւ. «խնդրեմ, ըսի, յոգնած եմ. ես ալ միասին նստիմ ջորիին վրայ, և միասին քաղաք երթանք: «Խոժոռ դէմքով մը «Ո՛չ, չըլլար» պատասխանեց և աչքին ծայրովը իս նայելով սկսաւ մըմնջել. «2ար սատանայ, վար հալածիս»: Ես որչափ որ կ'աղաչէի և կը կանչէի թէ՛ «Սպասէ, հայր սուրբ, մի բան պիտի ըսեմ, նա այնքան աւելի արագ կը քշէր ջորին: Հեռացաւ. և ես կը կատոյէի այս անյաջողութեան վրայ: 2է, վար-

դապետ, ըսի ինքնիրենս, դուն չես կարող ազատիլ իմ ձեռքէն»: Երդում ըրի որ այս նախատինքին վրէժը լուծեմ: Նոյն կողմերը շրջագայող կաղ սատանային մէկին յանձնարարեցի գնալ վանքը և այդ անտաշ մարդուն վրայ տեղեկութիւններ բերել ինձ: Նա կերպարանափոխ լինելով վանքը գնաց և քանի մ օր լրտեսելէ յետոյ լուր բերաւ թէ վարդապետը այս ինչ օր, այս ինչ գիւղը պտղի ժողովելու պիտի երթայ, և սովորաբար գիւղին մէջ այս ինչին տանը կըօթեանի: Գիւղացի կնոջ հագուստով նոյն գիւղը գնացի և նոյն մարդուն կնոջը իբրև ծանօթ՝ նոյն տունը հիւր եղայ: Մէկ-երկու օր յետոյ վարդապետն ալ եկաւ այնտեղ. և նոյն տան մէջ սենեակի գրացի էինք: Առաջին օրը, կերակուրին ժամանակ սպասաւորութիւն կ'ընէի սեղանին, և յետոյ ալ ձեռներուն ջուր կը լեցունէի լուացուելու: Աչքերս վեր չէի առներ. բնաւ չէի խօսէր հետը և չէի ծիծաղեր. աշխարհին ամենապարկեշտ կիներն էի դարձած: Իրաւ հագուստս գիւղացիի էր, բայց իմ դէմքին ու մազերուն գեղեցկութիւնը և վարմունքիս պարզութիւնը լաւ ազդեցութիւն արին: Երկրորդ օրը կերակուրէն յետոյ հարցուց տան տիրոջը թէ՛ «Ո՞վ է այս կինը». — «Նորեկ հիւր մը» ց պատաստանեց, «որ պատիւ ձեր կարգին, Զեղի սպասաւորութիւն կը

ընէ»: «Սնունն ինչ է». — «Հարսնուկ» է. ըսաւ: Տեսայ որ այդ յամառ մարդուն սիրտը շատ կակուղցած էր: Դեռ ցերեկ, ինչ պէտքս, ինչ կեղծաւորութիւն որ պէտք էր, բոլորը ի գործ դրի: Գիշերը նորա սենեակը գնացի և անկողինը մտայ մեղմիւ. Ո՞վ է, հարցուց ցած ձայնով. — Ես եմ, հարսնուկն եմ, պատասխանեցի. չի մերժեց այլ ևս, և յաղթուեցաւ: Երբ աստղեան տաճարէն դուրս ելանք, ես իմ նախկին կերպարանքս մտայ, և կանթեղը վառելով ըսի. «Զիս ճանչցա՞ր, վարդապետ». — Այո, դուն աղբիւրէն ջուր տուողը, և ճանբուն վրայ կանգնող կինը չես. — Ես սատանան եմ և ահա այսպէս յաղթեցի քեզի: Ըսէ ինձի. վարդապետ ըլլալէդ իվեր այսպիսի որոգայթի հանդիպած ունէիր: — «Զէ. բայց դուն ալ քանի սատանայ էիր եղեր, ասանկ երիկ մարդու հանդիպած ունէիր»:

Պատմութեան միջոցին, մանաւանդ անյաջողութիւնը պատմած ժամանակ, հարսնուկը, այդ յոյժ զգայուն աղջիկը, երբեմն կը յուզուէր, կը զայրանար, և ան, քաշելով վարկեան մը կանգ կ'առնուր: Ես նորա յուզումը, շարժումները կը ծիծաղէի, իսկ ուղեկիցքս վանականին յամառութիւնը կը հեգնէին:

Յաւերժահարսը հրաման առնելով իշխանուհիէն մեկնեցաւ. իսկ մենք դէպի բակը գալով կը

խորհէինք մեր ուղևորութիւնը շարունակել: «Ո՛ւր կ'երթաք. ըսաւ դիցուհին. երեկոյին հանդէս կայ. կը ցանկանամ որ դուք ես, մանաւանդ այս մահկանացուն հիւր մնայ եւ վայելէ երեկոյեան այդ զուարճութիւնները»: «Մեզի համար փոյթ չէ, պատասխանեց զօրապետը, բայց այս հիւրը կ'աճապարէ եթէ կամի, կարող ենք մնալ»: Խընջոյքի լուրը լսելով, ես հետաքրքրուելով ու գետնուած՝ իսկոյն հաճութիւն տուի մնալու:

Երբ դուրս ելանք դաւիթէն չէզար-Ֆէնտը գիւմի կողմ քաշելով ըսաւ.

— Ինչո՞ւ այս երեկոյ մնալու հաճութիւն տուիր:

— Ի՞նչ կայ, ըսի, այսքան երկար ուղևորութեան միջոցին օր մ'ալ կը հանգստանանք ու ասոնց խնջոյքները կը վայելենք:

— Բայց չը գիտէս թէ՞ վտանգ կայ. կ'արբենաս, աւելի ճիշտ է ըսել՝ կ'արբեցունեն, կը հրապուրեն եւ կը մոլորեցունեն քեզ:

— Ես չեմ արբենար. չեմ մոլորուիր, եթէ կամը ունենամ:

— Մեծ մի խօսիր (ըսաւ ծիծաղելով). այդ խնջոյքներուն Աստղիկը կը նախահասէ եւ ամենէն գեղեցիկ աղջիկները ներկայ կը գտնուին. ինչպէս կարող ես չի մոլորուիր:

— Ես կը յամառիմ եւ չեմ մոլորուիր:

— Ամենայն յօժարութեամբ ես քեզ կը քաջալերէի այդ ցանկութեան մէջ, եթէ մեծ իշխանը հրամայած չըլլար, որ քեզ պաշտպանենք, այսու հանդերձ ես թոյլ կուտամ որ այս երեկոյ դժոխային այդ խնջոյքին ներկայ գտնուիս, որպէս զի քու քաջութիւնդ փորձեմ:

Աստ եւ անդ շրջադայելով՝ անհամբեր կը սպասէի երեկոյին: Վերջապէս հրաւիրակ մը եկաւ եւ դիւ տարաւ խնջոյից յոյժ ընդարձակ սրահը: Դիցուհին բազմած էր իր նախագահական թիկնաթուին վրայ: Դիմացի կողմը մի բեմ պատրաստուած էր, ուր ելնելով զովասանական ճառեր, ոտանաւորներ կը խօսէին՝ որոց որ կարգն էր: Քիչ մը անդին մեծ բազմոց մը դրուած էր, որոյ վրայ նստած էին խումբ մը նուագաժողներ: Սրահին մէջ տեղը դրուած էր երկայն սեղան մը, որոյ վրայ շարուած էին բազում տեսակ աղանդերներ եւ ըմպելիներ: Հանդիսականներուն համար սեղանին շուրջը բազմաթիւ աթոռներ եւ թիկնաթուներ կային: Չի նայելով որ դժոխքին մէջ ամենուրեք մթութիւնը կը տիրէ, այդ սրահին ձեղունէն կախուած բազմաշտանակ ջահի մը լոյսը ցերեկուան պէս լուսաւորած էր բովանդակ սրահը:

Ընկերներս ներս չեկան. իսկ ես խոնարհա-

բար ողջոյն մը տալէ յետոյ դիցունւոյն, սեղանին շուրջը ինձ ցոյց տրուած թիկնաթուռներուն մէկին վրայ նստայ: Իմ տեղէն կարող էի թէ իշխանունին, թէ բեմը և թէ բոլոր հանդիսականները տեսնէի:

Դիցունւոյն մի նշանին վրայ հանդէսը սկըսու. նուագաժող սկսան արևելեան քաղցրալուր մեղեդիներ նուագել և երգել: Ի՞նչ քաղցր ախորժալուր եղանակներ, ի՞նչ ճարտար նուագաժողթիւն: Դեղեցիկ սեռը աղօր մէջ ալ իր փափկութիւնը կը փայլեցունէր:

Նուագաժողթիւնը կէս ժամու չափ տեկէ յետոյ դադարեցուցին, և ըմպելիներն ու խօսակցութիւնը սկսաւ: Իշխանունին խնդիրներ կ'առաջարկէր, թրինակ՝ գիւղունիներուն մէջ ո՞րը աւելի սիրելի է, ո՞ր գեղեցկութիւնը աւելի հրապուրիչ է: Հանդիսականներէն մի աղջիկ իր կարծիքը կը յայտնէր ու կը պաշտպանէր, ուրիշ մը կը հերքէր, ջերմ վիճաբանութիւններ, սրախօսութիւններ, և այս առթիւ ծիծաղներ տեղի կ'ունենային:

Երգն ու նուագաժողթիւնը դարձեալ սկսաւ և ժամանակ մը շարունակելէն յետոյ դադարեցաւ:

Ափսէով մը լեցուն ծաղիկներ բերին Աստղկան, որոց հետ կար նաև մի ծաղկեփունջ: Յաւերժահարսներէն մին բեմն ելաւ և խոնարհու-

թիւն մը ընելով դիցունւոյն, սկսաւ ծանր-ծանր իր մի տուն գովասանական ոտանաւորը կարդալ, որ հետեւալն է.

«Քո մի հայեացքովդ, անուոր,

հազար կտրիճներ կը գերես,

եւ մի ժպտովդ բիւրաւոր

Սիրոյդ բազնին զոհեր բերես:

Հանդիսականը ծափահարեցին: Վար իջաւ բեմէն և թուղթը տարաւ՝ դարձեալ խոնարհութիւն մ'ընելով, Աստղիկին մատոյց, որ ծաղիկ մը տուաւ անոր:

Նուագաժող հարսները սոյն տունը իսկոյն սովորած ըլլալով, սկսան չարմար եղանակաւ, մը երգել:

Յետոյ երկրորդ մը բեմն ելնելով, նոյն ձևով իր հետեւալ ոտանաւորը կարդաց.

«Մեզ ի՞նչ ազդէ արևն հզօր,

Քանի քո լոյսն ու շողը կայ,

եւ ի՞նչ արժէ լուսինն անզօր,

Քանի քո փայլն ու գեղը կայ:

Դարձեալ ծափահարութիւն. Յաւերժահարսը առաջնոյն պէս իր ոտանաւորը մատոյց իշխանունհոյն, որ ծաղիկ մ'ալ անոր տուաւ:

Նուագածուք դարձեալ սկսան սոյն նոր ոտանաւորը երգել և նուագել:

Երբորդ բեմ ելնողը Գոհարիկ կոչուած գեղանի աղջիկ մ'էր, որ իր ոտանաւորը կարգաց.

Վարդն ու մեխակ կ'ընդունին յար

Դոյն և անուշ հոտ քո այտերէդ:

Գեղեցկութիւնը դուն ծնար,

Դո՛ւ, պարծանք դժոխոց յաւէտ:

Դիցունին ժպտեցաւ և հանդիսականք ծափահարութեամբ սրահը թնդացուցին: Երբ Գոհարիկը իր գովասանական թուղթը մատոյց, իշխանունհոյն նորա այտերը համբուրեց և փունջը անոր շնորհեց:

Նուագածուաց խումբը շարունակեց սոյն նորագոյն երգը երգել և նուագել:

Իմ քովի յաւերժահարսները սկսան վիճաբանիլ. մէկը առաջին կամ երկրորդ ոտանաւորին կը հաւանէր, իսկ միւսը երրորդին. ուրիշ մը դիտողութիւններ կ'ընէր և կը յայտնէր ինձ թէ՛ «փունջը արժանաւորութեան բարձր աստիճան

մը չի ցուցներ, դիցունին կամքէն կախեալ է, երբ և որո՞ւն որ կամի, փունջը անոր տալ»: Եւ յամեկուց թէ՛ «եթէ գովասանները շարունակէին, տակաւին շատեր կային, որ իրենց ոտանաւորները պիտի կարգային, և ո՞վ գիտէ. թերևս անոնց մէջ լաւագոյնները կային:

Փունջը երբ տրուեցաւ, հանդէսի այդ մասը լրացած կը համարուէր:

Պարերն ու գոյգ գոյգ խաղերն սկսան: Ողելից ըմպելիները իրենց պաշտօնը կատարելով, աչքերս քիչ քիչ կը ծանրանային:

Կերակուրի սկսանք. Աստղիկը շնորհ բրաւ իր ներկայութեամբ սեղանը պատուել: Զանազան խորտիկներ կը յաջորդէին միմեանց:

«Կենաց»ներու բաժակներն սկսան, նախ մեծ իշխանին, յետոյ Աստղիկան, և հետզհետէ ուղեւորներուս, հանդիսականներուն, գովասաններուն կենաց բաժակներ կը պարպուէին: Ո՛չ այսչափ մօտերս նստող գեղունիներն ալ այլ և այլ անձնաւորութեանց համար «կենաց»ներ կը հնարէին, գաւաթներ կը բաղխէին:

Նախ օդին, յետոյ ալ գինին տակաւ իմ վրայ զգալի բրին իրենց ազդեցութիւնը: Այդ կը յիշեմ թէ՛ նուագածու հարսները հետզհետէ պարկեշտութեան սահմանէն դուրս երգեր կ'երգէին. իսկ շուրջս բոլորած գեղունիները իրենց փա-

փուկ ձեռներովը կատակներ կ'ընէին: Այն հպարտ ղիցունհին որ ի սկզբան այնքան լուրջ կ'երևար, այժմ ոչ միայն չէր սաստէր զեղունհները իրենց կատակներուն համար, այլ և ինձ կըսէր՝ «Մի քաշուի՛ր, ազատ, համարձակ և հաճոյիցդ համեմատ վարուէ՛, կեր, խմէ՛, զուարճացի՛ր, ազատ ես ախտեղ»: Նուագածուք ոգևորուած՝ կ'երգէին, անվերջանալի «կենաց»-ները կը շարունակուէին և կատակներն ու հրապոյրները կ'աւելնային: Իսկ ես մի ըոպէ միտքս ամփոփելով, մանաւանդ զօրապետին զգուշացուցիչ խօսքերը յիշելով, յամառ դիմադրութիւն մը կ'ընէի, բայց միւս ըոպէին ինքզինքս երջանիկ վայրկեաններու մէջ կը կարծէի: Գլուխս կ'որոնուէր, աչքերս կը փակուէին և հազար ու մէկ հաճոյալի, զրգուցուցիչ պատկերներ կ'երևային:

Այդ վայրկեանին չէզար-ֆէնտը դրան սեմին վրայ երևաց, նա դէպի իս նայելով ժպտեցաւ, և իշխանուհիէն թոյլտուութիւն ստանալով հրաւիրեց զիս իր մօտ: Երբ սրահէն դուրս ելայ, ըսաւ. «Անդունդին բերանը հասած էիր, մի քանի ըոպէ ես, և ահա անձնատուր պիտի ըլլայիր»: «Ես չը պիտի անձնատուր ըլլայի, ըսի. և եթէ այդ ոգելից ըմպելիները չըլլային, աւելի լաւ կը դիմադրէի և կարող էի մինչև վերջը տոկալ»: Ահ, այդպէս կ'ընեն ըսաւ, այդ ըմպելիներով

նախ խելքդ առին. սակաւ մի յետոյ պիտի մոլորեցունէին. քիչ յետոյ իրենց գեղեցկութեան դիմակները մեկդի պիտի նետէին, և պիտի տեսնէիր թէ՛ այդ գեղեցիկ հիւր ինքե՛րը այլանդակ, տգեղ հրէշներ են եղեր: Պիտի սկսէին զկծեցուցիչ խօսքերով քեզ տանջել, և իւրաքանչիւրը մեյմէկ ախտեր ու վերքեր պիտի ընծայէին քեզի, հետեւէ ինծի. հանգստանալու պէտք ունիս: Գնացի՛նք իմ սենեակ և անկողին մտնելէս մի վայրկեան շանցած արդէն քնացած էի:

3.

ԳԵՆԵԱՆՆ ՈՒ ՏԱՆՋԱՆԱՐԱՆՆԵՐԸ

Առաւօտուն հրաժեշտի ողջոյնս տալով Աստղիկին. օգտալարիկով մեկնեցանք յաւերժահասանց աշխարհէն:

Մեր օգային նաւը ուղղեցինք դէպի գեհեանն ու պատժարանները, ուր հասանք այդ օրը:

Հէգար-Ֆէնտը իմացուց կեղերոնական կառավարչին, և նա հեռագրով այն տեղերուն կառավարչին հրամայեց, որ թոյլ տայ ինձ երթալ և տեսնել այդ հաստատութիւնները:

Ճողեկառքով ուղղուեցանք դէպի այդ կողմը: Նախ հռչակաւոր գեհեանը տեսնել ուղեցի. ներկայացանք գեհեանապետին, և նա հրամայեց իր օգնականին առաջնորդել մեզ: Իջանք հարիւր աստիճաններէ վար, նախ դուրսի գուռը, յետոյ երկրորդը, երրորդը, և հասանք բուն գեհեանին մօտը: Արդէն դժուրքին մէջ սովորականէն աւելի ջերմութիւն մը կար. շոգէն կը նեղուէի, բայց այդտեղ չափազանց էր ջերմութիւնը: Օգնականը անկիզբի շապիք մը հաղցուց և գլխարկ մը դրաւ, տարաւ մեզ ասպակեայ կամ չը գիտեմ ինչ մետաղէ շինուած բոլորակ պատուհանի մը առջև, և «նայէ» ըսաւ:

Քանի հարիւր մեթր բարձրութեամբ, հազարաւոր մեթր լայնութեամբ և անծայր երկարութեամբ պատերով շինուած շէնք մ'էր, որոյ մէջ անչէջ կրակը կը վառէր: Պատերուն մէջ, ուրեք ուրեք մէջքի հաստութեամբ երկաթեայ խողովակներ կային, որոց միջէն առատօրէն և անդադար նաւթ կը հոսէր այդ անսահման, սարսափելի հնոցին մէջ և անշիջանելի կը պահէր գայն: Ինչպէս շինած էին գայն. — չը գիտեմ:

միայն թէ երբ քիչ մը հեռուէն նայիս, կարծես թէ վիշապի մը գլխու ձևն ունէր, ինչպէս որ ի հնումն տեսած էի, վերը դրախտն ու սուրբերը, և այլն, և վարը դժուրքն ու զանազան տեսակ մեղաւորներու կրած զանազան տանջանքները ներկայացնող մեծ պատկերի մը մէջ:

Բաւական դիտելէ յետոյ գեհեանը, վեր ելանք այդ խոր գուռէն և զնացինք պատժարաններուն դուռը: Պատժարանները ճիշտ գեհեանին վրայ շինուած էին, և անոր չափ անծայր ու անսահման կը թուէին: Մի քանի կողմերէ գիտեցի, բոլոր տանջարանները յանցանքներու աստիճանին համեմատ ծանր կամ թէթեւ էին: Մարդասպաններու, աւագակներու, զոգերու, և այլ ոճիրներու համար, յատուկ յատուկ բաժանմունքներ կային, որոնք աստիճաններու բաժնուած էին: Սպառազէն դահիճ սատանաներ, այս բաժանմունքին մէջ, սուրը ձեռքերնին՝ վերջին դատավճռոյն կը սպասէին: Մարդասպաններուն մարմինները պիտի վիրաւորէին ու կտոր կտոր պիտի ընէին: Գողերու բաժնին մէջ էին խարդախեալ ապրանք ծախողները և պակաս կշռողները, որոնց ձեռներն ու ոտները մամուլին մէջ պիտի պրկէին, ոսկորները պիտի փշրէին:

Գողերուն բաժնին մէջ էր մեծահարուստ վաճառական մը. զոր կանչելով պատուհանին

առջև, հարցայ թէ՛ «Ինչո՞ւ եկած է այստեղ»։ Նա հառաչելով ըսաւ. «Ա՛հ, իմ ապրանքներուն և առևտուրներուն մէջ խարդախութիւններ կ'ընէի, այնպէս որ աննշմարելի կը մնար, և խիղճս հանգարտեցունելու համար ատկից գոյացած շահուն մի մասը հոգևոր գործերու և հաստատութիւններու կը նուիրէի։ Կարծես թէ սրտիս ներսէն ձայն մը կ'ըսէր ինձ. «Մի՛ ըներ այդ խարդախութիւնները, անարդար գործերը. գողութիւն է, գողութիւն։ Բայց միւս կողմէն ալ աներևոյթ մէկը կը պատասխանէր. «Մտիկ մ'ըներ. այդ ոչինչ խօսքեր են. մանաւանդ որ այդ շահէն բաժին կը հանես բարեգործական հաստատութիւններու»։ Այս վերջին խօսքերը ինձ համար աւելի լաւ կերևային և այդ խրատին հետևեցայ. բայց երբ մահուանս ժամանակ իմ գործերը կշռուեցան, այդ բարի գործերը շատ թեթեւ եկան և զիս բերին այստեղ։ Ա՛հ, սխալուած եմ եղեր, սխալուած»։ Զայս կ'ըսէր և յորդարտասուք կը թափէր։ Ողորմելիին ղէմքէն յայտնի էր թէ որչափ տանջանքներ կը կրէր. եւ յայելցուց. «Ես այսինչ քաղաքէն, այսինչ անձն եմ. երբ աշխարհ վերադառնաս, խօսէ իմ որդւոցս և կնոջս որ ճար մը ընեն, զիս ասկէ ազատեն»։ Ծերունին զայս խօսեցաւ, և դահճին սպառնալից նայուածքին առջև դողդկալով, զնաց իր տեղը գլխիկոր։

Այս խղճալի տեսարանէն յետոյ, անցանք ուրիշ բաժիններ։ Ստախօսներու բաժնին մէջ կը տեսնուէին ամեն տեսակ խոստմնազանցներ, խաբեբաներ և կեղծաւորներ, որոնց լեզուները պիտի կտրտէին։

Այլ բաժնի մը մէջ զանազան կարգի անգութ բռնաւորներ կային, որոնց տարօրինակ պատիժներ կուտային. օրինակ՝ սայլապան կամ ջորեպաններ որոնք որոշեալ չափէն և զրաստին կարողութենէն շատ աւելի ծանր բեռներ բեռցուցած՝ խարազանով անգթօրէն մտրակած են այդ անասունները, մի և նոյն սայլերը նոյն բեռներով բեռնաւորած և, քարշող զրաստներուն փոխարէն, այդ անգութ սայլապաններն ու իշավարները լծած էին։ Երբ բարձրելոյն վերջին հրամանը դար, պիտի սկսէին զանոնք գաւազանով ու խարազանով շարաշար հարուածել, որպէս զի զառիվեր քարչեն տանին այդ անտանելի բեռը, և իրենք ալ այդ անգթութեան փորձը կրեն։

Սաստիկ ազահ, ժլատ և չափազանց արծաթասէր մարդոց յատուկ բաժանմունք մ'ալ տեսայ, ուր բովերու մէջ հալած ու հեղուկ վիճակի վերածած եռացեալ ոսկին և արծաթը խողովակներով այդ անպիտաններուն բերնէն վար

պիտի լեցունէին, որպէս զի ազով յագեցունէին անոնց ընչաքաղցութիւնը:

Առանձին բաժանմունքի մը մէջ էին այն որկրամոլները, որոնք առատ, համադամ կերակուրներով յափրացած ու յղփացած, երբէք չէին յիշած իրենց աղքատիկ զրացին, որ չոր հացով կ'ապրէր: Այդպիսիներուն առջև աղտոտ, կեղտոտ ամաններու մէջ լեցուած զանազան զաւրիւ ճճիներ ու միջատներ պիտի տային որ ուտեն և իրենց քաղցը հագեցունեն:

Եւ որ մէկ բաժանմունքը, որ մէկ պատիժը թուեմ: Հպարտ, նախանձոտ, շնացող մարդոց զատ զատ, և իր կինն ու երեխաները ծեծող, քաղցած պահող և անոնց հացազինը դինետուններու մէջ մսխող արբեցողներու համար ալ զատ բաժանմունքներ կային:

Բաւական չըջագայած ու դիտած ըլլալով, վերադառնալ ուղեցի: Ճանապարհին առաջին հարցումս եղաւ հազարապետին թէ՛ «Նկատելով որ աշխարհի մէջ իգական սեռն ալ այդ մարդոց թուոյն հաւասար է, այս տանջանարաններուն մէջ շատ նուազ էր գեղեցիկ սեռը, արդեօք, անոնց բաժանմունքը զատ էր, կամ անոնց մէջ յանցաւորները այնչափ քիչ են»: «Ո՛չ, պատասխանեց ուղեկիցս. մարդիկ, այդ ըլլան թէ կին, բոլորն ալ տրամադիր են մեղանշելու. սա-

կայն մինչդեռ այրերը համեմատաբար աւելի ուժեղ են, և սպանութիւններ, գողութիւնները աւաղակութիւններ, բռնութիւններ և այլն կարող են գործել, կիները որովհետեւ տկար և փափկակազմ են, անկարող են այդ յանցանքները գործել: Դեռ ցայսօր աշխարհի մեծագոյն մասին մէջ ինչ են կիները. — հաճոյքի առարկայ ստրուկներ: Այն տեսած կիներուդ մեծագոյն մասն ալ այն երեկիրներէն են, ուր գեղեցիկ սեռն ևս աղատութիւն կը վայելէ: Եւ ինչ են անոնց յանցանքը, կեղծաւորութիւն, ստախօսութիւն, նախանձ, այս պիտի բաներ: Կարելի է հարցունես թէ անոնք ալ եթէ արանց չափ ոյժ և ազդեցութիւն ունենային, միթէ այրերէն նուազ յանցանքներ պիտի գործէին. — այդ ուրիշ խօսք է»:

Երկրորդ, հարցայ օգնականին թէ՛ «Այդ տանջանարաններուն մէջ տեսած մարդիկս որ ազգի կամ կրօնի կը վերաբերէին»: Այստեղ միւլեառներով մարդիկ կան ըսաւ, որոնք ամեն ազգէ և կրօնէ խառն են: Բարձրելոյն կամքով մենք այստեղ կը բերենք և մեր գերիներուն թիւը կը բազմացունենք, մեզի ինչ փոյթ, ինչ ազգէ կամ կրօնէ կ'ըլլան, թոյ ըլլան»:

Հասանք կեղրոնականը ուր ճաշեցինք և գիշերեցինք. յաջորդ առաւօտուն ուղեկիցներովս միասին ճանբայ ելանք գէպի մեծ իշխանին պալատը:

41.

Ն Ե Ռ Ը *)

Հողեկառքով կ'ուղևորէինք: Կեղերոնականին իշխանութեան ներքե էր հեռադրատունը, ուր նախապէս այցելեցինք և մեզ պէտք եղած հեռագիրներն ու պատասխանները լսեցանք:

Աւելի յառաջ երթալով, երբ առանձինն շինուած ամրոցի մը մօտէն կ'անցնէինք, ներսէն գոռում գոչումի ահուելի ձայն մը լսեցինք, և հարցայ.

— Ի՞նչ տեղ է այս ամրոց:

Հազարապ.— Բան չը կայ, նեռն է:

— Նեռն ով է:

— Մեզմէ է. երբ երկնքէն վար թոթափեցանք, այն ալ մեզ հետ էր: Այն ալ գծոխային իշխան մը է, զոր բարձրելոյն կամքով այստեղ

*) Նեռն.— Անտիքրիստոս:

բանտարկուած, պահապաններ զրած ենք: Նա Քրիստոսէ առաջ աշխարհ պիտի գայ և բազում չարիք պիտի գործէ: Բայց նա ժամանակէն առաջ երբեմն խոյս կուտայ դէպի աշխարհ և արիւնհեղութիւններ ու աւերումներ կ'ընէ: Պահապանները կը զինուին, կը հետապնդին, աշխարհի ո՞ր կողմն ալ ըլլայ, կը գտնեն, կը ձերբակալեն, գծոխք կը բերեն և կը շղթայեն:

— Ուրեմն գնանք այդ իշխանն ալ տեսնենք:

— Գնանք:

Երեքս միասին վար իջանք չողեկառքէն և դէպի ամրոցը ուղղուեցանք: Երբ շատ մօտեցանք, որոշակի կը լսուէր նորա գծոխային խօսքերը որ կ'ըսէր: «Արձակեցէք զիս շղթաներէն, թոյլ տուէք, որ երթամ աշխարհ, ջարդեմ, կոտորեմ բնակիչները, և քանդեմ, աւերեմ, կործանեմ բոլոր երկիրները»:

Գունդ մը պահապան զինուոր յատկացուած էին ամրոցին: Զօրապետին տուած տեղեկութեան վրայ, գունապանը թոյլ տուաւ մտնել նեռին բանտը, որ կրկնակի պարիսպներով շրջապատուած և երկաթեայ դռներով ամրացած էր: Պահապանաց պետէն թոյլտուութիւն ստացանք սակաւ ինչ դիտել այդ անձը:

Սրահին մէկ կողմը կանգնած սկսայ դիտել: Մի կողմը երկաթեայ հաստ ձողերով վանդակա-

պատ տեղ մը կար, ուր էր Նեոլը շղթայուած։
Նա հսկայ մարմնով, դաժան դէմքով, կատաղի
աչքերով ու ցցուած մազերով անձ մը էր, որ
փրփրած ալիքներու պէս կը գոռար։ Զօրապե-
տին խօսած պատմութեան նայելով՝ նա չարու-
թեան ոգին էր և առաջին օրէն ի վեր այդ վի-
ճակին մէջ էր։ Մի քանի իրեն պէս ուժեղ պա-
հապաններ ունէր, որոց մին որ հսկայ անձ մ էր,
կերևար թէ միւսներուն պետն էր։ Ասոնք փոխ
առ փոխ կը հսկէին, բայց երբեմն պահապանաց
մէկին, երբեմն միւսին անհողութեամբ շարը կը
փախչէր, աշխարհի որ կողմը որ ոտք կոխէր,
աւերումներ կը դրժէր, յետոյ ձեռքակալուելով
կը բերուէր այստեղ։

Մեր գնացած պահուն նորա կատաղութիւ-
նը սկսաւ. եղունգներովը իր ձեռներն ու ոտները
կը ճանկութէր, կը վիրաւորէր, շղթաները փշրել
ու փախչել կը ջանար։ Մեծ պահապանը սաս-
տեց ըսելով. «Հը, հանդարդ կեցիր, անդգամ։
Չարը վայրկեան մը կը խաղաղէր, բայց յետոյ
դարձեալ «Թոյլ տուէք, թոյլ տուէք, արձակեցէք
զիս, որ երթամ աշխարհ աւերեմ» իր սովորա-
կան խօսքերը կը կրկնէր։ Պետը տեսնելով թէ
նա չի հանդարտիր, ելաւ կանգնեցաւ, և ձեռքի
երկաթեայ անագին լախտովը գլխուն և մարմ-
նոյն այնպիսի հարուածներ տուաւ, որ նա վի-

րաւորուած և արիւնով շողախուած, նուաղեցաւ
ընկաւ իր վանդակին մէջ։ Նա սարսափեցայ, հի-
մակ հոգին պիտի փչէ ըսի, բայց ուղեկիցքս
զիս ապահովցուցին թէ՛ «Մի վախեր այսպիսի
օրեր շատ է տեսել Նեոլ»։

Նւ յիրաւի քիչ վերջը սթափեցաւ, և աչքե-
րը բացաւ։ Հազարապետը պատմեց թէ՛ նա քիչ
քիչ կ'ուժեղանայ, հապա մոլեղնութիւնը, կատա-
ղութիւնը կը սկսի, վերջը պատիժը։

Աւելորդ համարելով այլ ևս երկար մնալ
այդտեղ, մեր վերջին «մտաք բարեաւն» ըսինք
պահապանաց, և մեկնեցանք այդ շարաշուք ամ-
րոցէն։



5.

ԳԺՈՒՔԻ ՊԼՏՄՈՒԹԻՒՆԸ

Հասանք իշխաններուն ապարանքները և նոյն երեկոյին այնտեղեր գիշերելով, յաջորդ օրը ուղեկիցներու հետ միասին ներկայացայ Սաղայէլին:

— Ե՛, տեսար իմ զօրագունդերը և զժոխային հաստատութիւնները:

— Այո՛, տէր իշխան, ոչ միայն ազոնք, այլ և Նեուր:

— Ահ, Նեուր, չարութեան ոգին, որ մեզմէ է:

Եւ գոռոզ գէմքով մը յարեց սատանան. «Ես եմ այն տեսածդ հոյակապ հաստատութիւնները հիմնողը, ես եմ անշիջանելի գեհեանը, այդ մըշտատե հուրը վառ պահողը, ես եմ զանազան տանջանքներ հնարողը, ես եմ որ իմ անթիւ,

անհամար գործակիցներու միջոցաւ կը խաբեմ, կը մոլորեցունեմ մարդիկը և կը բերեմ այստեղ. ես եմ, ես, ես, ես»:

— Այո՛, մեծ իշխան, մեծ է Ձեր զօրութիւն:

— Որովհետեւ տեսար զու իմ մեծութիւնն ու զօրութիւնը, երբ աշխարհ վերադառնաս, խօսէ բոլոր մարդոց թէ՛ սատանան մտացածին անձնաւորութիւն մը չէ:

— Ես ըսեմ, բայց եթէ դարձեալ չի հաւատան, ինչպէս ընելու է:

— Այո՛, կան մարդիկ, որ բնական օրէնքներուն ցոյց տուածներէն դուրս բանի մը չեն հաւատար, բայց ես ինչ ունիմ բնութեան հետ. մեր գործ սրտերու հետ է: Ձեր արարիչը ամեն մարդու ազատ կամք տուած է, և անոր սրտին մէջ մէյմէկ հրեշտակ դրած է, որ բարի խորհուրդներ կ'ուտայ. ես ալ ամեն մարդու մէջ մէյմէկ սատանայ դրած եմ: Մարդիկ կան որ իրենց կազմութեամբ և կրթութեամբ հրեշտակին կ'անսան, և մարդիկ կան, աւելի բազմաթիւ, որ մեզի կ'անսան, և մենք կը գերենք, կը բերենք այստեղ, տանջարանները: Արդ, ո՞վ մահկանացու, դո՛ւ, որ գնացիր տեսար այդ հաստատութիւնները, ունիս զիտոզութիւն մը:

— Այո՛. մեծագոր իշխան, եթէ թոյլ կուտար, երկու հարցումներ պիտի ընեմ:

— Ըսէ՛, ըսէ՛ նայիմ: Կոմսիայի մէջ ոչ ոք չէր հասկնալ իմ խօսքը: Եւ ինչո՞ւ:

— Առաջին, տանջանարաններուն պատիժները ընդհանրապէս անլուր, տարօրինակ չէին. երկրորդ, ստախօսներուն ու կեղծաւորներուն պատիժները քիչ մը խիստ չէին արդեօք:

— Յանցանքները և անոնց աստիճանները ձեր արարիչը կը վճռէ. իսկ պատժելու կերպերը մեր գործն է. այսու հանդերձ նա կարող է պատժոյ թեթեւացումներ և բարեփոխութիւններ կատարել, և մենք այն ժամանակ այնպէս կը պատժենք, օրինակ՝ ժամանակաւոր կեանքի մէջ գործուած յանցանքներու համար որոշուած մըշտնչենաւոր պատիժները՝ նա կարող է կարճ կամ երկար ժամանակաւորի փոխել: Դալով երկրորդ հարցմանդ, դուք թէ և զանոնք յանցանքներու տեղ չէք դնել, բայց այսչափ մըսեմ թէ՛ ստախօսութիւնն ու անոր եղբայրը կեղծաւորութիւնը եթէ վերնան աշխարհէն, իմ դժոխային դերիններուն թիւը կէս առ կէս կը նուազի:

Մեկնելու հրաման խնդրելէ առաջ, յիշեցուցի Սաղայէլին դժոխքի պատմութիւնը լսելու ցանկութիւնս: «Լաւ, ըսաւ նա. այդ ցանկութիւնն ալ կատարեմ համառօտ կերպով մը»: Նլաւ կանգնեցաւ, և, գահոյից առջևը պտոյտ մը ընելէ յետոյ, ելաւ բազմեցաւ իր տեղը և սկսաւ պատմել:

«Անյիշատակ ժամանակներէ ի վեր, երկնային թաղաւորութեան մէջ իմ բարձր աստիճանն ու պաշտօնն ունէի, զորս կը վարէի արժանաւորապէս: Միամտօրէն ես ևս կ'օրհնէի ու կը փառարանէի բարձրեալը, իբրեւ ստեղծող և տէր տիեզերաց: Կ'ըսէին թէ նա ի յաւիտենից է և պիտի տնէ յաւիտենս:

«Մի օր ամենակալը ժողովելով երկնային բոլոր հրեշտակները, և ներկայացունելով մեզ Օծեալը, ըսաւ. «Սա է իմ միածին որդին ի յաւիտենից. համազոյակից և փառակից իմ, պէտք է հնազանդիք ասոր»:

«Մինչդեռ մեզի համար ծանր էր մէկին հնազանդիլը, և ահա պարտ կը դրուէր մեր վրայ հնազանդիլ իր որդւոյն ևս: Ուստի իմ երկրորդին ըսի, որ ժողովէ մեր զօրագլուխները և բոլոր հետևողները, մեր զօրանոցի կողմը փութան: Այնտեղ խորհրդակցութիւնը կատարուելով, ձեր արարչին դէմ ապստամբեցանք: Լուրը շուտ հասաւ բարձրելոյն աթոռը, և յաջորդ օրը երկնային մեծ զօրութիւն, Միքայէլի զօրապետութեամբ մեր վրայ զրկուեցան. պատերազմեցանք և յաղթութեան կշիռը այն կողմը հակեցաւ: Հետեալ օրը մենք յաղթող հանդիսացանք. իսկ երրորդ օրը, ահ, սարսափելի էր. նոյն Օծեալը եկաւ մեր վրայ, բիւրաւոր շանթեր արձակեց և մենք բո-

լորովին ուժասպառ և զինաթափ եղանք: Նա հալածական վարեց մեզ մինչ երկնից պարիսպները, և անկէց վար թօթափեցանք անդունդը, հրեղէն լիճներուն մէջ:

«Երկար ժամանակ այնտեղ մնալէն յետոյ, սթափեցայ ես, և Բէեզգերուղը սթափեցուցի: Ելանք հրատապ ցամաքը, ձայն տուի մեր ընկերներուն, որոնք եկին ժողովեցան իմ շուրջ: Քաջալերեցի զանոնք և անմիջապէս մի մեծ պալատ կառուցինք և խորհրդակցութիւնը սկսաւ: Ամեն մէկը մէյմէկ կարծիք կը յայտնէր. վերջապէս որոշուեցաւ անողորքելի թշնամութիւն, հակառակութիւն և վրէժխնդրութիւն: Առ այս պատշաճ համարուեցաւ նորաստեղծ մարդը մեր կողմը դարձունել. որպէս զի իրենց Աստուծոյն հետ թշնամանան և նա ջնջէ զանոնք: Այս միջոցը լաւ էր, բայց ո՞վ յանձն պիտի առնուր այս վտանգաւոր ուղևորութիւնն ու դժուարին պաշտօնը: Ես այս արքայական պատուին արժանի չէի ըլլար, եթէ հասարակաց օգտին համար ես յանձն չառնէի:

«Իմ արագաշարժ թևերը շարժելով բարձրացայ մինչև դժոխոց դուռները, ուր էին «մեղքըն» ու «մահը, սոյն վերջինը թէև զիմադրեցինձ, բայց մայրը ծանօթացունելով մեզ մեկը-

*) Միլտովնի «գրախոս կորուսեալ»:

մեկու, բացաւ դժոխոց դուռները, և ես անցայ: Բազում փարսախսներ գնալէ յետոյ, վերջապէս հասայ աշխարհը:

«Մինչ ես կ'ուղևորէի, բարձրեալը կը տեսնէ իմ գնալը, և խորհրդակցութիւններ կը կատարուին չօր և Որդւոյն մէջ: Յետոյ կը հարցնէ հրեշտակներուն թէ ձեր միջէն ո՞վ յանձն կ'առնու մահկանացու լինել, մահկանացուին յանցանքին քաւութեան համար: Բոլորը անբարբառ կեցած են, և Որդին յանձն առած է մարմին զգենուլ և մեռնիլ փոխանակ նորա: Կը յայտնէ նաև թէ յետոյ յարութիւն պիտի առնէ, զիս պիտի նուաճէ ու կողոպտէ իմ աւարը. թէ՛ ի վերջոյ դժոխոց թիւը լրանալով մշտափակ պիտի մնայ:

«Ես չէի գիտեր երկնից մէջ տեղի ունեցած խորհուրդներն ու վճիռները, բայց յետոյ մարգարէութիւններէն ու գրքերէն *) իմացայ:

«Դառնանք իմ պատմութեան. ճարտանակեցի ուղևորութիւնս. ինչ դժուարութիւններու հանդիպեցայ, ինչ հնարքներով յաջողեցայ, զանց կ'առնեմ խօսել: Վերջապէս հասայ զրախտը, ուր ձեր նախածնողները երջանիկ վիճակի մէջ կ'ապրէին:

«Ի հարկէ գիտէք թէ ինչպէս օձի կերպարանք մտնելով համոզեցի Եւան, որ կերաւ բար-

*) Միլտովնի «գրախոս կորուսեալ»:

ւոյ և չարի գիտութեան ծառին պտղէն, որ իրենց արարչէն արգիլուած էր. թէ՛ ինչպէս Ադամ ևս իր կնոջ սիրոյն համար կերաւ այն պտղէն: Այր և կին տեսնելով իրենց և ապագայ սերնդոց կրելիք թշուառութիւնները, սկսան վիճել, զիրար մեղադրել և կշտամբել, բայց յետոյ տեսնելով թէ իրենց կամքով մեղանշեր են, զըզացած, ապաշխարած և թողութիւն խնդրած են: Որդին բարեխօս կ'ըլլայ անոնց համար, հայրը կը ներէ, բայց «2է կարելի կ'ըսէ, որ անոնք այլ ևս զրախտը մնան»: Ապա Միքայէլին կը հրամայէ, որ իջնէ զրախտը, պատմէ Քրիստոսի զալուստը, նորա գործերը, մխիթարէ զանոնք և զրախտէն դուրս հանէ: Հրեշտակապետն ալ իր տիրոջ հրամանին համեմատ կ'երթայ, կը պատմէ և զրախտէն դուրս կը հանէ»:

«Ես իմ զժուարին պաշտօնս յաջողութեամբ կատարած լինելով, գնութացի անցայ ծանօթ մեծ կամուրջէն, զոր «Մնդր»ն ու «Մահ»ը կառուցած էին, զանոնք զրկեցի յաշխարհ, և ետեկի բազմեցայ իմ այս արքայական գահը, ի մեծ ուրախութիւն համայն սանդարամետակաւնաց:

«Այն օրէն սկսեալ կազմակերպեցի պոչաւորներուն, եղջերաւորներուն, դեերուն և այլ դասակարգութիւնները, հիմնեցի գեհեանը և աչ

խարհ ուղարկեցի անհատական և շրջիկ սատանաները:

«2եր նախածնողները երկրի վրայ բնակելով, ունեցան զաւակներ. մենք ամենուն մէջ ալ կարգեցինք մեր պահապանները, նոյնպէս և բարձրեալը իր հրեշտակները: Ադամայ երէց որդւոյն, կայէնի սրտին մէջ բնակող մեր գործակալը առաջին անգամ յաջողեցաւ, նորա սրտին մէջ նախանձը զրգոնց, և նա սպանեց իր կրտսեր եղբայրը, Աբէլը. զոր տարինք դժոխք:

«Այստեղ պէտք է յիշել թէ՛ մենք թէ՛ և իրաւունք ստացել էինք արդարն ու մեղաւորը առ հասարակ գերել, սակայն երբ տեսանք թէ այս ինչ մարդ արդար է, չէր կարելի զայն մեղաւորներուն հետ բնակեցունել. ուստի արդարներուն յատուկ ընդարձակ բանտ մը կառուցինք, և այս նորաշէն բնակարանը բերինք բնակեցուցինք Աբէլը և հետագայ արդարները:

«Եկաւ ժամանակը. եւան չէր ուզէր դալ. չէր ուզէր աշխարհէն բաժնուիլ, բայց մենք համոզեցինք թէ բոլորն ալ քիչ ժամանակէն պիտի գան: Տակաւին կը վարանէր. բայց երբ ըսինք թէ. «Այնտեղ է քո սիրելի Աբէլը, արի, տես», լռեղձ կինը իւր վաղամեռիկ զաւկին անունը լսելուն պէս, մոռցաւ ամեն ինչ, և հետեցաւ մերայնոց, Ադամն ալ զժուարացաւ դժոխք դալը

և տրտմեցաւ, բայց յետոյ փրկութեան խոստումը յիշեց և «Կամք տեսառն օրհնեալ է և օրհնեալ եղիցի» ըսելով ելաւ եկաւ իր յատկացեալ բնակարանը:

«Ճարունակեցինք այնպէս. լաւն ալ, վատն ալ, Աբրահամը, Իսահակը, Յակոբը, դատաւորները. Դաւիթը, մարգարէները. բոլորն ալ բերինք բնակեցուցինք յիշեալ բանտը:

«Ա՛հ, ինչ երջանիկ ժամանակներ: Ադամէն մինչ ի Քրիստոս եղած ժամանակամիջոցը իմ դժոխային թագաւորութեան ամենափայլուն շրջանը, մեր ոսկեդարն էր:

«Մարգարէութեանց նայելով մօտեցած էր գուշակուած ժամանակը և մենք անհամբեր կըսպասէինք Օծելոյն դալստեանը: Մի օր Երուսաղէմի մօտ, Բեթլէհէմի այրին մէջ մանուկ մի կը ծնի Մարիամ անունով կոյսէ մը, բունն արդէն աւետած է եղեր Դաբբիէլը թէ «Հոգին սուրբ պիտի գայ քեզի» և այլն: Այս լուրը առածիս պէս հրամայեցի մերայնոց՝ զնալ քննել թէ այդ երեխայն ուր՞ գաւակ է. Եկին և պատմեցին թէ Մարիամը հիւսն Յովսէփին խօսեցեալն է եղեր, թէ՛ ասոնք Դաւիթիայի նազարէթ քաղաքէն էին, և մանկան անունը Յիսուս էր. Բան մը չը հասկացանք այս զէպքէն, գիտէինք երկնային հայրը, տեսած ենք նորա որդին, բայց Հոգին չէինք

լսել: Եթէ այդպէս է, երկնային թագաւորի մը կը վայլէ որ իւր որդին այսպիսի աղքատիկ վիճակի մը մէջ աշխարհ ուղարկէ: Ո՛ւր են նորա թիկնապահները, ո՛ւր են զինուորները և գանձերը: Ըսին նաև թէ արեւելքէն երեք մոզեր եկած, երկրպագութիւն ըրած և ընծաներ մատուցած են այդ մանկան, բայց այդ ալ մեծ բան մը չէ ըսինք. գուցէ անոնք սխալած են:

«Անցան օրեր, ամիսներ ու տարիներ. նա թէպէտ և չէր մեղանչէր, բայց նշան մ ալ ցոյց չէր իտար թէ ինքը բարձրելոյն որդին է:

«Երբ երեսուն տարեկան եղաւ, զնաց Յորդանան գետը և այլոց պէս ինքն ևս Յովհաննէսէն մկրտուեցաւ: Յետոյ հոգի կոչուածը անապատը տարաւ զայն, որ 40 օր տիւ և գիշեր ծոմ պահեց: Չարմացայ թէ ինչպէս կարելի է որ մարդ 40 օր բան մը չուտէ, չի խմէ և ապրի. սակայն կարելի է, ըսի, որ նոր գիւտ մը, հնարք մը գտած ըլլայ և անով կարող ըլլայ ծոմ պահել: Ժամանակ է, ըսի, որ փորձեմ զայն. մօտեցայ և երկու տեսակ առաջարկութիւններ ըրի. երբ տեսայ որ երկուսն ալ գրքի միջի պատասխաններով մերժեց, երրորդ և կարևոր առաջարկութիւն մը ըրի: Հանեցի զայն բարձր լեռան մը վրայ և ցոյց տալով աշխարհի բոլոր թագաւորութիւնները և անոնց փառքը, ըսի ա.

նոր թէ՛ «Այս ամենը քեզի կուտամ, թէ՛ որ իյնաս ինձի երկրպագութիւն ընես»։ Այս հրապուրիչ առաջարկութիւնս ալ մերժեց, ըսելով թէ՛ «Յետ գնա, սատանայ, դրուած է թէ՛ քու տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես ու միայն զանիկայ պաշտես»։ Զարմացայ թէ՛ ինչպէս ճանչցաւ զիս և ինչ տեսակ մարդ էր այս. զի մինչդեռ ուրիշ մարդիկ աշխարհային փոքր փառքի մը, փոքր պաշտօնի մը և փոքր շահու մը համար կը յօժարին ինծի խոնարհիլ, երկրպագանիլ, այս մարդ բոլոր թաղաւորութիւնները մերժեց և չի խոնարհեցաւ ինձի։ Այո՛, նոյնն է մեր հակառակորդն է ըսինք և մեր զգուշութիւնները յաւելցուցինք։ Այնուհետև վայրկեան մը չէինք դադրեր զինքն ու իրեն զօրժերը զիտելէ և որոգայթներ լարելէ։

«Իրեն հետևող տասներկու հոգի ընտրեց ինչ մարդիկ, — խեղճ ձկնորսներ, տղէտ մարդիկ։ Ունէր նաև բազմաթիւ աշակերտներ ալ, որոնք նոյնպէս հասարակ զասակարգի մարդիկ, հաց ուտողներ էին։

«Նա ելաւ լեռը և քարոզել սկսաւ. կը կարծէի թէ անոնց վիճելու, կռուելու ձևեր, կեանքի մէջ յաջողելու հնարքներ պիտի սովորեցունէր, բայց ինչ լսեցինք. — երանի կուտար սղաւորներուն, հեղերուն, խաղաղութիւն ընողներուն, ար-

դաբութեան համար հալածուածներուն, ինչու որ անոնց փոխարէն երկնային զանազան բարիք պիտի վայելեն եղեր։ «Սպանութիւն մի ըներ» ըսուած էր, ինքն յաւելցուց թէ՛ «ոչ միայն սպանութիւն մի ըներ, այլ պարապ տեղը եղբօրդ մի սրդողիւր, «լիմար» մի ըսեր։ Պատուիրուած էր չի շնանալ. ինքն կ'ըսէր թէ՛ սրտով ցանկանալն ալ նոյնն է։ Սրդէն ըսուած էր թէ՛ «Քու ընկերդ սիրէ»։ Օծեալը կ'ըսէր թէ՛ «ոչ միայն ընկերդ սիրէ, այլ ձեր թշնամիներն ալ սիրեցէք և ձեզ ատողներուն բարիք ըրէք»։ Ըսէ, ով մահկանացու, այդ կարելի բան է, ով կարող է թշնամին սիրել և ատելիին բարիք ընել։

— Ինքն իմաստութիւնն է. թերևս օգտակար համարած է այնպէս ընել։

— Եթէ թշնամին սիրել և ատելիին բարիք ընել պէտք է, ինքն ալ հայրն ալ դիտեն որ մենք իրենց թշնամին ենք. ինչու մեզ չեն սիրեր։ Ինչու մեզի բարիք չեն ըներ։

— Այդ պատուէրները, կարծեմ, աշխարհի մարդոց, մանաւանդ իր աշակերտներուն համար է, և ոչ թէ ձեզի համար. ձեր դրութիւն և պայմանները տարբեր են։

— Սրդէն մենք չենք ընդունիր և չենք հնազանդիր նորա պատուէրներուն, բայց տեսնենք թէ՛ աշխարհի մարդիկ, զոնէ իր հետևողները կա-

րո՞ղ են այդ պատուէրը կատարել. մինչև իսկ ինքն կարո՞ղ է այդպէս ընել:

— Նա ինչ որ կը պատուիրէր, նախ ինքն կը գործէր և յետոյ ուրիշներուն կը պատուիրէր: Ազնիւ, մաքուր, անկեղծ եղիք կ'ըսէր, ինքն արդէն այնպէս կը վարուէր, խոնարհամիտ, զթած, ոգորմած, ներողամիտ եղիք կ'ըսէր. ինքն արդէն բոլոր մարդոց վերաբերմամբ ոգորմած, զթած էր:

Խնդրեմ, մեծ իշխան, յաւելցուցի. հաճեցէք շարունակել ձեր պատմութիւնը:

Պէտք է այստեղ յիշել թէ՛ Սաղայէլը դժոխոց պատմութիւնը խօսած ժամանակ մերթ կը կանգնէր, մերթ դահոյքի աստիճաններէն վար իջնելով յատակին վրայ կը ճեմէր: Բարկացած ժամանակ տեսնելու էր նորա ահարկու գէմքը և փայլակնացայտ աչքերը. նորա ձայնը որոտման պէս կը թնդացունէր բովանդակ սրահը:

«Այսպիսի քարոզութիւններ կ'ընէր, շարունակեց Սաղայէլ, և օրըստօրէ իր մարդիկը կը բազմանային: Ո՛չ միայն քարոզութիւն, այլ և հրաշքներ կը գործէր. բորոտներ, գիւահարներ, խուլեր, համրեր, զանազան հիւանդներ կը բժշկէր. անդամալոյծները կը քալեցունէր, կոյրներուն աչքերը կը բանար և մեռեալներ կը կենդանացու-

նէր: Նա բնութեան դադտնիքը գիտնալով բազում հրաշքներ կը գործէր:

«Եկաւ վերջին ընթերիքի օրը. նոյն երեկոյին, սեղանին վրայ, մեկգմեկ սիրելու բազում պատուէրներ տուաւ իր մարդոց և քաջայերեց զանոնք: Եւ զարմանալի է, որ մենք անոր թշնամին ըլլալով հանդերձ նրա գործերէն հաւատացինք թէ բոլոր մարդոցմէ վեր, բարձրելոյն ծնունդն է, հրէաները, մանաւանդ զպիւրները, փարիսեցիներն ու սադուկեցիները չէին ուզեր հաւատալ. ինչո՞ւ, — վասն զի անոնց փառասիրութեանն ու շահուն կը դաչէր:

«Ես տեսնելով նորա գործերը, անձամբ մաքառելու համար դուրս եկած էի դժոխքէն և քայլ առ քայլ անոր կը հետեւէի: Տեսնելով որ չը կարողացանք խաբել, մոլորեցունել այդ մարդը, գնացի քահանայապետներուն սիրտը մտայ և զրգուեցի զանոնք ըսելով. «Ինչ էք կայներ, ահա զրգուեցի զանոնք ըսելով. «Ինչ էք կայներ, ահա Յիսուսը բոլոր աշխարհը կը մոլորեցունէ, ալ որո՞ւ քահանայապետ պիտի ըլլաք»: Անոնք սկսան զայն սպաննելու խորհուրդներ ընել: Դիւրացուցի անոնց գործը. գնացի անոր մարդոցմէ մեկին, Յուդային մօտ, և անոր ալ արծաթսիրութիւնը զրգուեցի: Սա երեսուն արծաթ ստանալով հրէաներէն, մատնեց Յիսուսը անոնց ձեռքը: Դիշերը քահանայապետին տունը տարին, իրենց ուզա-

ծին պէս դատեցին, մահուան դատաւարտեցին, չարչարեցին և առաւօտուն տարին Պիղատոս անուն կուսակալին որ մահուամբ պատժէ:

— «Ես նկատելով թէ, եթէ Պիղատոսը որ և իցէ պատճառաւ ազատ արձակէր Յիսուսը, մեր բոլոր ջանքերը ի գուր կ'երթային և մեր հակառակորդը աւելի ևս կը դօրանար, գօտէպնդելով գնացի Պիղատոսին մօտ: Այդ մարդը մէկ կողմանէ տեսնելով հրէից քահանայապետներն ու գրգռուած ամբոխը, որոնք կ'աղաղակէին «Վերցնուր մեր միջէն այդ մարդը, խնայր հանէ զայդ», կը խորհէր անոնց ըսածը ընել, և միւս կողմանէ խորհելով թէ բոլորովին անմեղ է այդ ամբաստանեալ անձը, կ'ուզէր որ արձակէ, վարանման մէջ էր: Խորհեցաւ, և Յիսուսը մի անգամ ալ չեւորովդէսին ուղարկեց, բայց ձեր փրկիչ ըսածը, այնտեղ հրաշք մը չի գործեց, ինքզինք չի պաշտպանեց. կարծես թէ ինքն իր կամքովը դէպ ի մահ կը դիմէր: Նորէն Պիղատոսին առջև հանեցին: Դատաւարտութիւնը կ'ուշանար և ևս կը վախենայի թէ մի Կուցէ անակընկալ մի դէպք պատահի և մեր գործը փճանայ: Եւ յիշաւ զժբազդ դէպք մը պատահեցաւ, կուսակալին կինը արդէն լսած էր Յիսուսը. այդ պահուն անձամբ տեսնելով նորա շնորհալի դէմքը և անմեղութիւնը լսած ըլլալով, Պիղատոսին յայտնեց

թէ. «Զըլլայ թէ այդ արդարին արիւնը մտնես, զի երազներ, տեսիլքներ տեսած է»: Իր կնոջ խօսքերէն նորէն թուլացաւ կուսակալը: Արձակելու վտանգ կար. առանց ժամանակ անցունելու, իսկոյն մեր իշխաններուն, զօրապետներուն և ամենէն ճարպիկ պոչաւորներուն հրահանգ տուի և ուղարկեցի. անոնք թելադրեցին հրէաները, որ սկսան աղաղակել. «Եթէ զայդ արձակես, կայսեր բարեկամը չես»: Մի ևնոյն ժամանակ ես ալ մտայ Պիղատոսին սիրտը, որոյ մէկ անկիւնը նստած էր նորա հիւանդոտ, նիհար խիղճը, ձեռքերովս խղճին բերանը փակեցի. դարձեալ չեղաւ, խիղճը խղզուկ ձայներ կը հանէր, կը ճուար ու կուլար: Պիղատոս կը վարանէր: Ելայ խղճին բերնին վրայ նստայ. այնպէս որ շունչը քթէն կ'առնէր և ալ չէր կրնար ձայն հանել: Ես սկսայ խօսել:

— Բո ինչո՞ւն պէտք է, Պիղատոս, ժողովուրդին կանխը կատարէ և տեղդ նստէ հանդիստ:

— Հապա կնոջս տեսած երազը:

— Եյն կին է. փափուկ սիրտ ունի. այն ինչ դիտէ օրէնքն ու պետութեան շահը, դուն անոր մի լսեր:

— Արդեօք. հռովմէացւոց շահը չի պահանջեր որ արդարը պաշտպանեմ:

— 2է, արդարութեան խնդիրը այստեղ երկրորդական է. հռովմէական շահը կը պահանջէ որ ժողովուրդը խաղաղի. խռովութիւն չենէ:

— Հրեայք ինչ կրնան ընել:

— Չես լսեր որ կ'աղաղակեն թէ՛ «Եթէ զայդ արձակես, կայսեր բարեկամը չես»:

— Լաւ, չեմ ուզեր որ զիս ամբաստանեն, բայց ո՞ր օրէնքով մահուան դատապարտեմ:

— Ինքզինք հրէից թագաւոր կը կոչէ, խռովարար է կ'ըսեն, այդ բաւական է. բայց անմեղ է եղեր թէ մեղաւոր, քո ինչ գործն է. չէ որ դուն արդարութիւնը պաշտպանեցիր և ըսիր թէ «Դա անմեղ է, արձակեմ», երբ իրեն ազգակիցները մեղաւոր կը համարին, մեղքը իրենց շըլիւքը:

«Վերջապէս համոզեցի կուսակալը, և նա Յիսուսը խաչը հանելու դատաւճիռը տուաւ: Զինուորները անարգեցին ծաղրեցին զոյն և հրէից յանձնեցին: Ահ, որչափ որ կ'անարգէին և կը ծեծէին զայն, մենք այնչափ կը հրճուէինք:

«Յաղթութիւնը մերն էր թէև, բայց չը հեռացայ կուսակալին սրտէն, մինչև որ տարին խաչեցին Օծեալը: Վայրկեն է ի վայրկեան լուր կը ստանայի, երբ վերջին լրատուն եկաւ և աւետեց թէ հողին աւանդեց Յիսուսը, դուրս ելայ Պիղատոսին սրտէն և վազեցի ի Գողգոթայ: Անդ

տեսայ Յիսուսը, որ երկու խաչուած աւաղակներու մէջտեղ ի խաչ բարձրացած, ձեռներէն ու ոտներէն արիւն կը հոսէին: Ամեն վիշտ և տառապանք զորս կրած էր նա, կ'երևէր իր թախծալի դէմքէն: Ահ, նորա թափած ամեն մի կաթիլ արիւն՝ յորդառատ գետակի մը պէս՝ կը շիջուցանէր վրէժխնդրական, բորբոքեալ հուրը իմ տոչորեալ սրտին և կը զովացուցանէր:

«Վերջին պահուն, կ'ըսէին, իր հօրը կանչած և աւանդած է իր հողին: Գնա՛, գնա՛, կ'ըսէի ինքնին. քո տարօրինակ վարդապետութիւն տակաւին խոր արմատ չը ձգած, գնա՛ քու երկնային հօրը մօտ և անդ վարէ քո թագաւորութիւն: Դու ինչ ունիս այս աշխարհի մէջ. դա մերն է:

«Երկար ժամանակ խաչին հանդէպ կանդնած, կը դիտէի անոր թշուառ վիճակը և սիրտս ուրախութեամբ կը լցուէր:

«Ահա Մեսիան, ահա ձեր Փրկիչը, որ պիտի փրկէր մարդկութիւնը. ինքզինք իսկ չի կրցաւ փրկել, և այսպիսի խեղճ վախճան մը ունեցաւ:

Դժոխոց մեծ իշխանին երգիծաբանական դառն խօսքերուն չի կարացի համբերել այլ ևս. «Ներեցէք, մեծ իշխան, ըսի. ինչ ունէիք այդ մարդուն հետ. որ զայն մինչ ի խաչ բարձրացուցիք, որչափ որ գիտենք, նա բոլորովին անմեղ էր:

«Այո, նա արդար էր. աշխարհի մարդոց մէջ մինչև ցայսօր երբէք տեսած չենք այնպիսի մարդ մը, որ անոր չափ ազնիւ և մաքուր, անոր չափ ճշմարտասէր, և անոր չափ գթած և իմաստուն լինի: Մենք այդ գիտենք. այսու հանդերձ մենք ատելով կ'ատենք զայն. վասն զի ինչպէս ըսի առաջ, նա էր երկնային պատերազմին մէջ մեզ յաղթողը ու այստեղ թօթափողը. և ինչպէս քիչ վերջը պիտի պատմեմ, նա էր որ մեր արդարոց բանտը կործանեց. չը գիտես թէ նա ո՞րչափ չափիք հասցուց դժոխայնոցս: Լսէ, շարունակեմ իմ պատմութիւնը:

«Բէնեդկեբուղը և միւս իշխաններն ևս իրենց պաշտօնները աւարտած լինելով, հետզհետէ եկին բոլորեցան իմ շուրջ և խնդակցութիւններն կը յայտնէին:

«Երեկոյեան պահուն խաչէն վար առին Յիսուսը և գերեզմանի մը մէջ թաղեցին:

«Հրէաները պահապան զինուորները զրին, որպէս զի չըլլայ թէ աշակերտները գողանան: Ես ևս յիշելով այն խօսքերը թէ երեք օրէն յարութիւն պիտի առնէ և դժոխքը իջնէ՝ արգարները փրկելու, կանչեցի իմ ճարպիկ գնդապետներէն մին, որ իր գնդովը միասին մինչ երեք օր հսկէ գերեզմանին շուրջը և ամեն վայրկեան տեղեկութիւններ տայ ինձ: Եթէ, ըսի, ո՞ր և իցէ

շարժում մը կամ յարութիւն առնելու փորձ մը ընէ, իսկոյն իմացուցէք միւս պահապաններուն և ինձ. մի թողուք որ տեղէն շարժի, կապեցէք, կաշկանդեցէք նորա թեքն ու ոտները:

«Այլ գործ մը չունէինք աշխարհի մէջ, ժողովեցի իմ իշխանները, զօրապետներն ու զինուորները և իջանք դժոխքը: Այստեղ արդէն իմացած ըլլալով մեր փառաւոր յաղթութիւնը, հանդէսներ, ուրախութիւններ կը կատարէին:

«Ես անմիջապէս գործի սկսայ, նախ դժոխոց վերին դուռները երկաթեայ անխորտակելի նիզերով ամրացուցի. երկրորդ, հեռաձայնով (թելեֆօն) ի գէն կոչեցի դիւային բոլոր գունդերը և դժոխոց դրան առջև և բանտին շուրջը մէյմէկ գունդ պահապան կարգեցի՝ կազմ ու պատրաստ ամեն յարձակմանց և ամեն պատահականութեանց դէմ. յստկապէս պատուիրելով որ եթէ Յիսուսը գայ, ջանան զայն ձերբակալել. չօրրորդ, այն ուրախալի ուրբաթ օրը երբ Օծեալը ի խաչ բարձրացաւ և հոգին աւանդեց, ուրախութեան տօնի օր սահմանեցի:

«Այս գգուշական միջոցները ձեռք առնելէ յետոյ, ժողովեցի իշխանները այս սրահին մէջ և իւրաքանչիւրը սկսաւ իր գործերը պատմել: Ամեն ժամանակ հեռագրեր կըստանայինք գերեզմանին պահապաններէն թէ՛ «ոչինչ դէպք», ոչինչ

փոփոխութիւն»։ Անցաւ ուրբաթի, անցաւ հետեալ օրն ալ։

«Երբորդ օրը արշալուսէս անաջ ժողովուած էինք։ Իշխանները երբեմն լուրջ խորհրդակցութիւններ և երբեմն զուարճախօսութիւններ կը նէին. օրինակ՝ Բելիար—Մամմոն իշխան, դուն ո՞ր էիր այն միջոցին։

Մամմոն — Դուր մինչ զբաղեալ էիր Պիղատոսով, քահանայապետներով ու ամբօխով, ես՝ ամեն կողմ վազելով՝ նաղովրեցւոյն զրամարկիր կը բնտռէի, բայց չի գտայ. կ'երևի թէ Յուդան տարած է։

Բել. — Դ՛օ, ինչ կար այն դատարկ սնտուկին մէջ։

Մամ. — Մի քանի մանր ոսկիներ ալ չը կային, կ'առնէի և իմ գանձարանները կը տանէի։

Մողոր — Դ՛օ, Մամմոն իշխան, եթէ այդ ոսկիներն ու գանձարաններն ալ չունենայիր, մի կոպէկ չէիր արժէր։

Մամ. — Դուք որ գանձ չունիք, միթէ բան մը չէք արժէր։

Մող. — Մենք առանց գանձու ալ իշխան ենք։

Մամ. — Առանց ոսկիի ալ կարելի է իշխան ըլլալ, բայց գանձ ունեցող իշխանը ա-

ւելի զօրաւոր կ'ըլլայ։ Ես եթէ դժոխոց շահը ի նկատի չունենայի, և եթէ կամենայի ու կարելոր անձանց առատօրէն ոսկիներ տայի, դուցէ ն սգովրեցին ազատէի մահուանէ։

Քէեղղե. — Բայց նա ինքզինքը չէր պաշտպանէր. կարծես թէ կամաւ ի խաչ կը դիմէր. արդեօք ինչ էր նպատակը։

«Այս վերջին խօսք նորոգեց իմ մտահոգութիւն, կասկածն ու տխրութիւնը. «Ա՛հ, ըսի, այսօր ալ անցնէր»։ Բէեղղեբուզը նոյնը կը կրրկնէր։ Դեռ այս խօսքերը մեր բերանն էր, և ահա սոսկալի դրդիւն մը սկսաւ. սարսեցաւ, սասանեցաւ բովանդակ դժոխքը, և իշխանները հետզհետէ ուշաթափ յերկիր զլորեցան, ես մնացել էի միայնակ. հասկացայ որ Օծեալն է եկեր է. «Զէնքի դիմեցէք, զինուորներ, պատերազմեցէք, ձերբակալեցէք», կ'աղաղակէի, բայց ես ևս տերևի պէս կը դողայի, կը սարսուայի։ Ա՛հ, ինչ սարսափելի վայրկեաններ. կը լսէի երկաթեայ դուռներուն խօրատալումը, սլարիսպներուն փլչիւր և շէնքերուն քանդուիւր, բայց թուլացած տկարացած էի. բան մը չէի կարող ընել։ Ահաբեկ կըսպասէի լի՛ք ահա ամբողջ դժոխքը պիտի կործանի և մենք ամենքս ալ նորա վլատակաց ներքև պիտի թաղուինք։ Մէկ վայրկեան գալը,

մէկ վայրկեան արդարները ազատելը և մէկ վայրկեան վերադարձը, ընդամենը երեք վայրկեան տեւեց երկրաշարժը և դադարեցաւ. շունչ առի և ձայն տուի իշխաններուն, որոնք սթափեցան և հասկացան տխրալի իրողութիւնը: Ըստ չանցած՝ գերեզմանին և այլ պահապանները հետզհետէ եկին, ժողովին ներկայացան և իւրաքանչիւրը իր տեսածը պատմեց: Առաջինները կ'ըսէին թէ՝ «Մենք կը հսկէինք անդադար. այս առաւօտ երկրաշարժ մը եղաւ և յանկարծ նա վեր ելաւ գերեզմանէն, և իբրեւ դրօշակ, իր խաչը ուսը առած էր. հրեշտակներ կը սպասաւորէին անոր: Հրէից պահապանները իրենց վախէն մեռածի պէս նուաղեցան. իսկ մենք վախնալով՝ շարժիլ, խօսիլ անգամ չը կարողացանք: Նա դնաց. իր հօրը մօտ թէ դժոխքը եկաւ, — չը գիտենք: Նւ ասա մենք փութացինք եկինք որ եղելութիւնը պատմենք Ձեր մեծութեան»: Դժոխքի դուռներուն պահապաններն ալ կ'ըսէին թէ՝ «Նա անյախիսի արեղ զօրութեամբ, մըրկի մը պէս եկաւ, որ դռները ինքնին բացուեցան»: Իսկ ընտրելոց բանտին պահապանները կը պատմէին թէ՝ «Նորա զօրութեան առջև բանտին պարիսպները հալեցան, կործանեցան. դուռները արագին շառաչմամբ խորտակեցան և մենք գիտապատշաճ կանք նուաղեցանք, մեզմէ ոմանք միայն տե-

սած էին թէ՝ երբ ընտրեալները դուրս հանած է, խաչին ծայրովը դպած է բանտին որմերուն, և այդ արագին շէնքը մէկ վայրկեանի մէջ հիմնալատակ քանդուած է»: Ահ, ի՞նչ ըսեմ իմ ապիկար պահապան-ղինուորներուն, եթէ յաջողէին Յիսուսը գերի բռնել, այս դէպք դժոխային տարեգրութեանց մէջ ոսկեզօծ տառերով պիտի արձանագրուէր և մեր յաւերժական պարծանքը պիտի ըլլար: Բայց չի պատժեցի, մինչև իսկ չը յանդիմանեցի զանոնք, քանի որ իմ հօր իշխաններն անգամ, սակաւ ինչ ես ևս ծանօթ վիճակն ստացանք»:

«Երբ այդ հարցաքննութիւնը լրացաւ, սուբիօր սահմանեցի այդ օրը: Նս և միւս իշխանները խմբովին ելանք շրջադայեցանք բոլոր դժոխքը: Մեր իշխանական պալատն ու ապարանքները թէ և խախտուած էին, բայց վտանգաւոր չէր. իսկ ընտրելոց բանտը աւերակ մը էր դարձել: Տանջարաններն ալ քննեցինք. ոչ չէնք վնասուած և ոչ ալ յանցաւոր մը պակսած էր:

«Յաջորդ առաւօտունը դարձեալ արտասովոր ժողովի կանչեցի իշխանները. քաջալերեցի և ըսի թէ՝ նոյն տարուած գերիները, որ սակաւաթիւ են, արդէն մերը չէին: Թէև ցաւալի է որ այսուհետև արդարները այստեղ չը պիտի զրկուին, սակայն կարող ենք մխիթարուիլ խորհելով թէ՝ մնացող

մեղաւորները, փառք դժոխոց, միւսներէն աւելի չատ են: Մեր հակառակորդը հեռացաւ, զնանց, և անգամ մ' ալ աշխարհի վերջը պիտի դայ պատաստանի համար: Արդ, ըսի, դուք իշխաններդ և համայն սանդարամետականք պէտք է որ ձեր պաշտօնին գլուխն անցնիք և ամենայն ժրութեամբ շարունակէք: Իշխանները հաւանութիւն տալով մեկնեցան:

«Այդ միջոցին լուր առինք աշխարհէն թէ՛ մեր թշնամին զեռ վերջնապէս գնացած չէ եղեր իր հօրը քով: Բանտէն արդարները ազատելէ յետոյ, նախ մէկ-երկու կանանց, ի վերջոյ քանիցս իր աշակերտներուն երեցած է:

«Նա քառասուն օր երկրի վրայ մնալէն յետոյ երկիրը համբարձաւ: Գնահ, զնահ ըսինք. բաւական է քու հասուցած չարիքը մեղի:

«Ռիտնս, ինչ պաշտօն տուած է այդ տասն և մէկ աշակերտներուն. «Գնացէք, բոլոր ազգերը աշակերտեցէք, մկրտեցէք զանոնք, ինչ որ սովորեցուցի ձեզ, անոնց ալ սովորեցուցէք» և այլն: Զարմանալի չէ՞ նորա այս պատուէրը, այն մարդիկը, որ հրէաներէն փախնալով սենեկին դուռը փակած կը նստէին, անոնք պիտի զնային ու աշակերտէին հեթանոս ազգերը: Այն ձկնորսները իրենք ինչ զիտէին որ ուրիշներուն ալ սովորեցունեն:

«Մենք հետաքրքրութեամբ կը զիտէինք այդ խեղճ, անպաշտպան աշակերտները, թէ ասոնք ինչ պիտի ընեն. բայց տեսանք որ շարժում մը, փոփոխութիւն մը չը կայ. այլ միայն ժողովուրդ ու աղօթք լսել: Ալ ինչ կընային ընել:

«Ինչ տասն օրեր անցել էին. երբ սնոնք միասին ժողովուրդ էին, ահա երկնքէն սաստկաշունչ հովի պէս լեզուի շնորհք մը տրուեցաւ անոնց, ըսին թէ ս. հոգիէն է. և այդ մարդիկը, որ մի ժամ առաջ ուղիղ խօսիլ անգամ չը գիտէին, մէյմէկ լեզուադէտ հռետորներ դարձան և հազարաւորներ իրենց կրօնին համոզեցին:

«Դարձեալ ժողով, դարձեալ խորհրդակցութիւն ըրինք և վճռեցինք, որ այդ առաքեալ ըսուածները և անոնց աշակերտները ուր որ ալ ըլլան, անոնց դէմ սաստիկ հալածանքներ հանել տանք:

«Անոնք հետզհետէ զօրացան և եկեղեցիներ կազմեցին: Պօղոս ըսուած մարդ մ' ալ, որ առաջ մեր կողմանէ կը հալածէր զանոնք, նա ալ վերջապէս նազովըցուոյն ուռկանը ընկաւ և մերկատաղի հակառակորդը դարձաւ:

«Քրիստոնէական կրօնը տարածուած էր Հայաստանի, Յունաստանի և հռովմէական կայսրութեան զանազան երկիրներուն մէջ: Այս զրփադրութեանց հանդէպ մենք սակայն վհատած

չէինք: Ամեն երկրի հոգևոր և մարմնաւոր իշխանութեանց փառասիրական ոգին ու ժողովրդեան մոլեռանդութիւնը կը զըզուէինք:

«Բայց զարմանալի էր սկզբի երեք չորս դարերուն մէջ քրիստոնէից միութիւնն ու անոնց ցոյց տուած յամառ ընդդիմութիւնը: Մենք որչափ որ հալածոււմը կը սաստկացունէինք, անոնք ալ յօժարամիտ կը նահատակուէին, կը տանջուէին և կը տարածէին իրենց հաւատքը:

«Մենք կը մխիթարուէինք ասով թէ՛ որչափ որ նազովրեցւոյն հետեւողները կը բազմանան, չկայ անոնց մէջ թաղաւոր մի, չկայ ազգ մը որ ամբողջովին դարձած, քրիստոնէութիւնը ընդունած ըլլայ, բայց ահա այդ դժբաղդութիւնն ալ պատահեցաւ: Դիտէք անշուշտ թէ՛ ձեր Տրդատ թագաւորին օրով, Դրիգոր անուն վարդապետի մը համոզումներովը, Տրդատը, նախարարները և բովանդակ հայաստանը քրիստոնէութիւնն ընդունեց: Ահ, աղետալի՜ ժամանակներ, կործանեցին Աշտիշատի, Արմաւիրի, Երիզի, և այլ տեղեաց մէջ մեր ունեցած հոյակապ մահաճանները և անոնց տեղ Յիսուսի խաչը կանգնեցուցին: Ինչպէս ի վերև պատմեցի, ևս տեսած եմ այն փայտը, ուր ձեր փրկիչը խաչուեցաւ. ինչ էր այն, — բայց եթէ անարդանաց քառաթև զործի մը:

«Չը մոռնամ աստ յիշել թէ՛ ճիշտ Տրդատի

դարձին միջոցներուն աւելի մեծ դժբաղդութիւն մը ևս պատահեցաւ. զի հռովմայ կայսրը, Կոստանդիանոսն ևս հաւատաց իրաւեցեալ նազովրեցւոյն:

Դժոխոց իշխանը այս միջոցին դարձեալ բարկացաւ և կանգնելով ոտքը գետինը զարկաւ և ըսաւ:

«Հասարակ ժողովուրդը դիցուք տգէտ է. բայց ինչ ըսեմ այն թագաւորներուն, իշխաններուն և ազնուականներուն, որոնք կը զիջանին հետեւողներ ըլլալ Յիսուսին: Սա ինչ կը պատուիրէ, — սէր առ մարդիկ, խոնարհամտութիւն, ճշմարտութիւն, մարբութիւն, գթութիւն և այլն: Միթէ կը վայլէ իշխաններու, որ այս պատուէրները կատարեն. — գոնէ ես չեմ կրնար:

Չարունակներ մեր պատմութիւնը. ըսաւ Սաղայէլ, և իր տեղը բազմեցաւ և ըսաւ:

«Եղածն եղած էր. այդ ատելի կրօնը տակաւ առ տակաւ տարածուեցաւ բովանդակ Եւրոպայի մէջ. և ասիական մի քանի ազգեր ալ հետզհետէ ընդունեցին:

«Ընդհանրական ժողովներ կ'ընէին և վճիռներ, կանոններ կը սահմանէին: Կրկնապատկեցինք մեր ջանքեր. չորրորդ ժողովին ժամանակը հայերը և յետոյ արեւելեան և արևմտեան եկեղեցիները բաժանուեցան: Սկսաւ հակառակութիւնն

ու ատելութիւնը միմեանց դէմ, որ կը տեղէ մինչեւ ցայսօր: Ի՞նչ բարեբաղդութիւն և ի՞նչ յաջողութիւն: Այդ օրն ալ ուրախութեան օրերու կարգն անցուցի:

«Այս առթիւ յայտնեմ քեզ, թէ մենք ունինք մեր սղոյ և ուրախութեան օրերը: Սղոյ օրերն են՝ 1. մեր երկինքէն այստեղ իջած օրը. 2-րդ. Յիսուսի ծնունդը. 3-րդ. Յարութիւնը և գերիններուն ազատութիւնը: Իսկ ուրախութեան օրերն են՝ 1. ձեր նախածնողները խաբելուս. 2-րդ. Յիսուսի խաչելութեան, 3-րդ. քրիստոնեայ եկեղեցեաց բաժանման օրերը. Բայց այս հանգիստաւոր օրերը քրիստոնէական կրօնի մասին է միայն. ուրիշ կրօններու վերաբերեալ տօնի օրերը զատ են:

«Շարունակեմ իմ պատմութիւն: Եկեղեցիներուն բաժանումէն յետոյ, հազար տարի և աւելի ևս մերթ հերիտիկոսներ երևան կ'ենէին և բանադրանքներ, նդովներ ու հալածանքներ տեղի կ'ունենային: Արեւմտեան եկեղեցիէն ոմանք կ'ուզէին տիրել մարդոց մտքին ու խղճին վրայ, ուրեք ուրեք հաւատաքննութեան ատենաներ կազմուեցան և բազումք զանազան տանջանաց ու մահուան դատապարտեցան: Մեր ուզածն ալ այդ էր:

«Վերջապէս դեռ չորս դար առաջ, եւրոպայի

մէջ բարեկարգիչ ըստած հոգևորականն ու իր հետեւողները երևան ելան. բողոքեցին զեղծ հոգևորականաց դէմ, զատուեցան անոնցմէ և նոր կանոններով առանձին եկեղեցի կազմեցին: Ասոնց մէջ ևս հետզհետէ անհամաձայնութիւններ ու բաժանումներ տեղի ունեցան, որը ձեռնտու էին մեզ, սակայն միւս կողմանէ, զժրագոյտբար, տկարանալ սկսած էր կրօնամոլութիւնը, որ հալածանքներ կազմելու համար մեր կարեւոր գործիներէն մին է,

«Եւրոպական միտքը վերջին դարերուն մէջ տակաւ առ տակաւ զարթնուլ սկսաւ, ուսումնարաններ ու համալսարաններ բացուեցան և գիտութիւնը տարածուեցաւ ամեն կողմ:

«Այս լուսաւորութիւնը թէ և աննպաստ էր մեզ համար, սակայն իր նպաստաւոր կողմն ալ ունեցաւ. զի մարդիկ որ կրօնի ծառն ալ, ճիւղերն ալ կը պաշտէին, անոնց ուսեալ զաւակունք այդ ծառն ալ ճիւղերն ալ բոլորովին ի բաց մերժեցին: Եւ անոնք երբ այդ ծառը արմատախիլ կ'ընէին, նորա ճիւղերուն փարած խղճի տունկն ևս միասին դուրս եկաւ իրենց սրտերէն, և սոյն քարքրուտ, խոպան մնացած պարտիզին մէջ, բուսաւ շահամոլութեան դժնիկը և այլ անպիտան մացառներ»:

Այո՛, կան տակաւին մարդիկ, որ կեղեկն ա-

ւելի էականին, Յիսուսին կը հաւատան, բայց, բարեբաղդաբար, այսպիսեաց թիւը նուազ է:

«Ահա այս է մեր համառօտ պատմութիւնը, զոր քո խնդրանաց համեմատ կատարեցի: Եւ դու ո՞վ մահկանացու, կարծեմ բաւական ծանօթացար դժոխքի պատմութեան և մեր գործունէութեան, ըսէ նայինք, ունի՞ք այլ հարցում մը»:

Ես դեռ չը պատասխանած, սենեկապետ մը ներս մտաւ և իշխանապետին մօտը գնալով բան մը խօսեցաւ. գունատեցաւ Սադայէլ և «Թող ներկայանայ» ըսաւ:

Մ Ի Զ Ա Դ Է Պ Մ Ը

Անհատական սատանայ մը էր որ ներկայացաւ Սադայէլին և գլուխը խոնարհեցունելով հրաման ստացաւ և սկսաւ պատմել:

«Քրիստոնէական կրօնին պատկանող մի մարդ իմ ջանքերովը զանազան յանցանքներու մէջ ընկղմած էր: Նորա անձնական հրեշտակին տետրակին մէջ այդ մարդուն հաշիւը շատ նուազ կը մնար. և լիայոյս էի թէ այս մարդը դժոխք բերելը ժամանակի խնդիր է, բայց վերջին ա-

միսներուն մէջ իր առևտուրներէն և գործերէն դատելով, դէպի հակառակը, հրեշտակին կողմը դառնալ սկսած է. տրոտում, տխուր կը մտածէր ու կ'արտասուէր. ես կը կարծէի թէ աշխարհէն չէր ուզէր բաժնուիլ, անոր համար է. բայց քիչ յետոյ հիւանդացաւ և սկսաւ բարձրաձայն իր զղջումը յայտնել: Վերջին օրը և վերջին ժամուն տեսայ որ վտանգ կայ մեր գործին. մօտը գնացի որ յորդորեմ, համոզեմ զայն, բայց նա «Չեմ ուզեր, չեմ ուզեր» ըսաւ: Խելքը գլուխն էր, բայց ականջները շատ տկարացած էին: Առիթէն օգուտ քաղել ուզելով՝ հետեւեալ հնարքին դիմեցի. մօտեցայ և ձեռքովս զիս ցոյց տալով հարցուցի. «Հրեշտակը կ'ուզես» նա կարծելով թէ ինձ հա-համար է կ'ըսեմ, սկսաւ զարձեալ «Չեմ ուզեր» ըսել: Յետոյ ձեռքովս հրեշտակը ցոյց տալով հարցուցի. «Զիս կ'ուզես», նա կարծելով թէ հրեշտակին համար կ'ըսեմ. «Այո, կ'ուզեմ, կը սիրեմ» պատասխանեց: Զփոթեցաւ հրեշտակը և սկսաւ բողբոլել թէ «Խաբարխութիւն եղաւ»: Յիւանդը հոգեւորք ընկաւ, և վերջին խօսքը եղաւ. «Ներէ, տէր»: Գաբրիէլը եկաւ և հիւանդը իր վերջին շունչը փչեց: Հրեշտակապետը մինչ նորա հաշիւները տեսնելով տրտմած նստած էր, և զղջման մասին հրեշտակին տուած բացատրու-



Թիւնները կը լսէր, մենք փութացինք, ձերբակալեցինք այդ հոգին և հրաւիրեցանք դէպի դժոխքը: Նա չէր ուզէր գալ, սկսանք քարշելով տանել: Զղջացեալը աղիողսրմ ձայնով կը կանչէր Պաբրիէլին. «Ինչո՞ւ դիս կը թողուք, ես զղջացած եմ»: Մինչև այն ատեն հրեշտակապետը իմացած ըլլալով իրողութիւնը, նժարին բարիի կողմը դրաւ զղջումը, և տեսնելով որ շատ ծանր կը կշռէ չարութեան կողմէն, շուտով խումբ մը երկնային զօրք առած՝ եկաւ հասաւ մեզի: Ես դեռ կայարանի պահականոցը չի մտած՝ նա գրաւեց անոր մուտքը: Մերայինք իմանալով գործը, դժոխքի ճանապարհով մօտակայ կայարանին իմացուցին: Խումբ մը պահապան դինուոր ալ մեզի օգնութեան եկաւ, և դէմ առ դէմ կանգնեցանք: Հրեշտակապետը գոչեց ինծի դիմացէն:

— Թշուառական, ինչպէս կը յանդգնիս զղջացեալ հաւատացեալ մի այստեղ բերել:

— Տարիներէ ի վեր այն մեր հպատակն է:

— Զը գիտես որ վերջին ամիսները զղջացած և մեր կողմը դարձած էր:

— Բայց ապաշխարած չէր:

— Դժ, քո ինչ գործն է անոր ապաշխարանքը, շան որդի:

— Վերջին ըոպէին հարցայ, զիս կոչէր:

— Խարգախութիւն ես արել, չճշտաւորապէս, հապա միւս խօսքերը:

— Կը զառանցէր:


— Գիտես որ զառանցանք չէ. խաբողախ, խաբեբայ, արձակէ այդ հոգին. անիծեալ:

— Զէ կարելի մեր ձեռքը անցածը թողու: Այսպէս բաւական վիճեցանք, մերայինք ևս սկսան վիճել: Անոնք իրենց երկնային տիրոջ յայտնած էին թէ այս մարդ որչափ ալ կատարելապէս զղջացած՝ բայց ժամանակ ունեցած չէր ապաշխարելու. հրաման եկած է ըսին թէ՝ «Յիշեցէք աջակողման աւազակը, որ միայն զղջամբ փրկուեցաւ. արդարութիւնը պաշտպանեցէք, զղջացեալը ազատեցէք»: Որովհետեւ անոնք իրենց տիրոջմէն հրահանգ ստացան, ես ևս առաջարկեցի մի քիչ սպասել, և փութացի, եկի այստեղ. որպէս զի Ձեր մեծութեան հրամանն ստանամ. պատերազմինք երկնայնոց հետ թէ գերին վերադարձունենք իրենց»:

Սաղայէլը բարկութեամբ գոռաց. «Ինչ կ'արժէ այնպիսի փոփոխամիտ մարդ մը, որ տարիներով ինծի հպատակելէն յետոյ, վերջին օրերը յանկարծ զղջում կը յայտնէ: Ժամանակ չը կայ ժողովի. գնացէք միայն իշխան Բէեղզե. բուզին իմացուցէք որ շուտով գայ. հեռաձայնով (թելեֆօն) իմաց տուին իշխանին, որ մի ըոպէ

յետոյ եկաւ և սկսան խորհրդակցութեան: «Թէ և վստահ եմ, կ'ըսէր մեծ իշխանը, թէ այդ երկնային զօրաց խումբը կրնանք ցրուել, բայց այդ մարդը բերենք ուր դնենք. արդարոց բանտը քանդուած է բոլորովին, և իբրեւ զղջացող իրաւունք չի կայ տանջանարաններուն յանձնել զայն. ըսենք թէ առանց իրաւունք նայելու, պատժաբանը նետենք, բայց ո՞վ գիտէ. գուցէ այս պատճառաւ Օծեալը նորէն դայ, քանզի պատժարաններն ալ:» 2է, չարժեր, մեծադօր իշխան, ըսաւ Բէնգլեբուզ: Այո, չարժեր. ըսաւ իշխանապետն ևս, և հրամայեց պահապանին թէ՝ «Ջուտով վերադարձիր և արձակեցէք այդ անսխիտանը, այդ ապուշը»:

Սնանական դժբաղդ սատանան դառնալով իր տեղը, իշխանապետին հրամանը իւրայնոց հաղորդած և արձակած է զղջացեալը ըսելով. «Մեր տէրը ձեզի շնորհեց այս գերին»: Գարբիէլ ձեռքին սուրը շողացնելով ըստծ է. «Ո՛չ թէ ձեր տիրոջ շնորհն է, այլ սորա շնորհն է»: Եւ ազատուած հողին առնելով ուրախութեամբ ու ցընդութեամբ վերադարձած են երկինքը:



7.

ՂԱՐ. ԵՒ ՎԵՐՋ. ԴԺՈՒՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Միջադէպին խորհրդակցութեան ժամանակ ես և երկու առաջնորդներս սենեկին մի հեռաւոր անկիւնը քաշուած էինք: «Առաջ եկէք», ըսաւ իշխանապետը, և մանք մեր նախկին տեղը դնացինք:

«Տեսնո՞ւք, ըսաւ Սաղայէլ, թէ մենք ալ երբեմն արդարութիւնը կը սիրենք. դժոխքին դուռը հասած մարդուն թոյլ կուտանք երկինք գնալ:» Նա որ այնչափ դուռդ և ամբարտաւան էր, ամօթ չէր համարէր սուտ խօսել. զի յայտնի բան էր թէ զղջացեալ անձը արձակելուն պատճառը ո՛չ թէ արդարասիրութիւնն էր, այլ երկնային թաղաւորին երկիւղն էր: Բայց չէի կրնար իբր սուտը երեսին զարնել. միայն այսչափ մը ըսի թէ՝ «Ի հարկէ, ապագայի հեռատեսութիւնն ալ մեծ տեղ կը բռնէ ձեր արդարասիրութեան զղացման մէջ», և յաւելցուցի «Ինչդրեմ, մեծ իշխան, շարունակեցէք ձեր պատմութիւնը:

— Պատմութիւնը լրացած է. ունիք այլ հարցում մը:

— Նախ պիտի հարցունէի թէ՛ այդ պատմութիւնը զոր ըրիք, քրիստոնէից մասին էր միայն. արդեօք ուրիշ կրօններու վերաբերեալ ազգերուն հետ ինչպէս է ձեր պատմութիւն:

— Ամեն ազգի և կրօնի համար ալ զժոխքը իր պատմութիւնն ունի, և ձեր արարիչը իւրաքանչիւրին կրօնին և ընդհանուր օրէնքին համեմատ կը դատէ. բայց պէտք է ըսել թէ ամենուն վճիռներն ալ, զորս կը կարդանք զժոխք ընդունած ժամանակնիս, արդար են:

— Երկրորդ, մեծ է ձեր զործունէութիւն և ազդեցութիւն. կարելի չէ արդեօք որ մարդկային ազգը ձեր վրէժխնդրութեան առարկայ չընէք:

— Զրլլար, ըսած եմ արդէն:

— Բայց մինչև երբ պիտի տեսէ ձեր հակառակութիւն:

— Յ վերջ պիտի տեսէ: Հա, կ'ըսեն թէ երկնքի մէջ մեր պակսած թուոյն չափ արդարներ պիտի լեցունէ, և յայնժամ զժոխքը պիտի փակուի. լայց դիտէք թէ մեր թիւ ո՞րչափ շատ է. մենք միլեառներ անգամ միլեառներ և աւելի ենք. և մենք թոյլ կուտանք որ այդ պահանջուած մեծ թիւը լեցուի. միշտ պիտի մոլորեցունենք մարդիկը որ այդ թիւը չի լրանայ:

— Բայց մեր աստեղագէտները կը կարծեն թէ աշխարհը տակաւ առ տակաւ պիտի սառի,

և վերջին մարդը հասարակածի սառնամանեաց մէջ իր վերջին շունչը պիտի փչէ. այն ժամանակ երբ մարդ չի մնայ աշխարհի վրայ, ալ զո՞վ պիտի մոլորեցունէք:

— Նախ, պէտք է դիտնալ թէ՛ դեռ մինչև երկրագնդին սառիլը բիւրաւոր տարիներ ու դարեր կան. մենք մինչև այն ատեն տակաւին միլեառներով մարդիկ պիտի գերենք:

— Բայց վերջապէս պիտի սառի երկիրը, և թերեւ մինչ այն ատեն արդարոց թիւն ալ լրանայ և զժոխքը փակուի:

— Մենք ամեն ջանք ի զործ պիտի դնենք որ այդ թիւը չի լրանայ: Գալով սառելու խընդրոյն, եթէ երկար դարերէ յետոյ այդ հաւանականութիւնը իրականանայ, այն ժամանակ ձեր արարիչը, մարդոց բնակութիւնը կարելի նոր մոլորակի մը մէջ նոր Ադամ-Եւաներ պիտի ստեղծէ, և մենք նոր կերպարանքով ու նոր սուտերով պիտի խաբենք, մոլորեցունենք այդ նորաստեղծ մարդիկն ևս, և պիտի շարունակենք մեր զործը:

— Զէ կարելի, մեծ իշխան, որ ներդրութիւն ստանալով բարձրեալէն այժմէն դադրիք զործելէ:

Ամբարտաւանը՝ դարձեալ զայրոյթ յայտնելով զոռաց:

— Ըսած եմ արդէն և կ'ըսեմ դարձեալ. ևս

չեմ գոչացած իմ ըրածին վրայ, և սերողութիւն ալ չեմ խոյրեր: Միայն կը հաշտուիմ նորա հետ հետեւեալ առաջին կամ երկրորդ պայմանովը: Առաջին, կ'առաջարկեմ, որ ձեր արարիչը մոռանայ անցեալը և մեզ վերստին մեր նախկին հրեշտակային պաշտօնին մէջ հաստատէ: — Հա՛ ինչ կ'ըսես:

— Ինքն տէրը միայն գիտէ:

«Եթէ այս չէ կարելի, երկրորդ, կ'առաջարկեմ որ նա, ինչպէս մեզ հեռացուցած է, նոյնպէս հեռացունէ իր մօտէն մեր հակառակորդները, բոլոր հրեշտակներն ևս, և ինքն, իբրեւ տէր տիեզերաց, ընութեան օրէնքներուն համեմատ, կ'առավարէ:

«Եթէ բարձրեալը այսպէս կամի և ընդունի, յայնժամ բարույ և չարի գաղափարները թէ և կը շարունակեն մնալ, բայց մենք և հրեշտակները, — իբրեւ իմանալի գոյացութիւններ — կը գաղ-ըինք գործելէ, կը գաղըինք անոնց ներկայացուցիչը համարուելէ: Բարի մարդիկ յաւէտ կը վայելեն իրենց ներքին հոգեկան հաճոյքն ու երջանկութիւնը. իսկ չարերը կը տանջուին իրենց խիղճերէն ու կը պատժուին իրենց չար գործերէն:

«Յայնժամ կը կազմալուծուին սանգարամետական բոլոր դասակարգութիւնները, կը շիջանի

գեհեանը, կ'աւերին տանջանարանները և կը փակուի դժոխքը:

«Եւ ինչ կը մնայ դժոխքէն ու սատանաներէն բայց միայն անցեալ ու անհետացեալ գաղափարաց յիշատակներ»:

Ունկնդրութիւնը վերջացած էր: Գուրս ելանք դահլիճէն: Իմ աբտօնութիւն թէ՛ երբ և կամիմ, թոյլտուութիւն ըլլայ դժոխքը այցելել, վերահաստատեցաւ, և 1896 օգոստ. 26-ին ինձ տրուած հրովարտակը նորոգուեցաւ:

Ըյն երեկոյին մնացինք այնտեղ և պատրաստուեցանք յաջորդ օրը ուղևորիլ յաշխարհ:

16 դեկտ. 1899 թ.

Վ Ե Ր Զ

Յ Ա Ն Կ

Գլ.	ԵՐԵՍ
— Քառաչարան	3
1. Դժոխային իշխանները, Բէհզդերուզը, և այլն	5
2. Սատանայական դատարանները, (սրտաւորները, եղջերաւորները ու սոցա երգը, դերերը, յաւերժաւորները և անոնց երգը,	13
3. Գեհեանն ու պատժարանները:	33
4. Նուր:	46
5. Դժոխքի պատմութիւնը, (սատանաները երկնքէն թռիւթակիւ, դժոխքի կազմակերպութիւնը, Քրիստոսի ծնունդը, դորժերը, վարդապետութիւնը, վարքը, խաչելութիւնը, յարութիւնը, և այլն մինչև ցայսօր:	59
6. Միջագէտ մը. (զղացեալ մեղաւորի մը ազատութիւնը):	80
7. Շար. դժոխոց պատմութեան	85
— Վերջ	89





ԳԻՆՆ Է 40 Կ.

12842-12843

2015

